ՀՀ ԱԳՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆ – ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի և Վրաստանի միջև ակտիվ են եղել շփումները և փոխայցելությունները պետական կառավարման և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Հունվարի 12-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի գլխավորությամբ Երևանում կայացել է Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը, որի ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին» համաձայնագիրը: Հուլիսի 1-ից ուժի մեջ մտած այս փաստաթուղթը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին Հայաստան-Վրաստան սահմանը հատել նույնականացման քարտերով:

Հունիսի 22-ին Երևանում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Վրաստանի ԱԳ նախարարությունների միջև՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի և Վրաստանի ԱԳ նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիայի գլխավորությամբ: Խորհրդակցությունների ընթացքում կողմերն ընդգծել են երկկողմ բարիդրացիական հարաբերությունների աճող դինամիկան, քննարկել Հայաստան-Վրաստան բարձր մակարդակի շփումները և քաղաքական երկխոսության օրակարգը:

Հուլիսի 7-8-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Բաթում, որի ընթացքում տեղի է ունեցել Հայաստանի և Վրաստանի վարչապետերի հանդիպումը: Նշվել է, որ տարածաշրջանային կայունությանն ու բարգավաճմանը նպաստելու ընդհանուր հանձնառությամբ Հայաստանն ու Վրաստանը նպատակ ունեն ներգրավվել բարձր մակարդակի երկխոսության ռազմավարական հարցերի շուրջ, որը լրացուցիչ խթան կհանդիսանա արդյունավետ համագործակցության, ինչպես նաև տարածաշրջանային խաղաղության ու կայունության համար:

Հոկտեմբերի 26-27-ը կայացել է ՀՀ վարչապետի աշխատանքային այցը Վրաստան, որի ընթացքում Նիկոլ Փաշինյանը մասնակցել է «Թբիլիսիի Մետաքսի ճանապարհ» համաժողովին: Նշված համաժողովի ընթացքում ՀՀ վարչապետը ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

Նոյեմբերի 28-29-ը տեղի է ունեցել ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի աշխատանքային այցը Վրաստան: Թբիլիսիում ԱԽ քարտուղարը հանդիպել է Վրաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Վախթանգ Գոմելաուրիի, Վրաստանի Խորհրդարանի ղեկավար Ծալվա Պապուաշվիլիի հետ:

Դեկտեմբերի 21-22-ը ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հրավերով աշխատանքային այցով Հայաստան է ժամանել Վրաստանի խորհրդարանի նախագահ Ծալվա Պապուաշվիլիի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Վրաստան երկկողմ հարաբերությունները, անդրադարձ է կատարվել նաև «Խաղաղության խաչմերուկ» նախագծին, տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանն առնչվող այլ հարցերին:

Հաշվետու տարում Վրաստան են այցելել նաև ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արմեն Դիլանյանը, ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը և այլ պաշտոնատար անձինք:

Հայաստան են այցելել պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեն, ԱԳ նախարարի տեղակալ Լաշա Դարսալիան, Վրաստանի խորհրդարանի տարածաշրջանային քաղաքականության և ինքնակառավարման հանձնաժողովի նախագահ Կախա Կախիշվիլին, Եվրոպական ինտեգրման հարցերի հանձնաժողովի նախագահ Մակա Բոճորիշվիլիին:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Տարվա սկզբից ՀՀ կառուցողական ջանքերն ուղղված են եղել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանը: Այս գործընթացում Հայաստանի համար շարունակել են առանցքային մնալ մի շարք սկզբունքներ՝

- Հայաստանը և Ադրբեջանը 1991 թվականի դեկտեմբերի 21-ի Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա պետք է ճանաչեն միմյանց տարածքային ամբողջականությունն առանց որևէ երկիմաստությունների և կամայական մեկնաբանությունների՝ ընդհուպ հստակ նշելով մակերեսները,

- երկու երկրների միջև միջպետական սահմանը պետք է սահմանազատվի իրավական հիմքով և իրավասու մարմինների կողմից իրենց լիազորությունների շրջանակներում կազմված ԽՍՀՄ ժամանակաշրջանի վերջին՝ պատշաճ իրավական հիմքով ձևավորված տոպոգրաֆիկ քարտեզների

հիման վրա. Ալմա-Աթայի հռչակագիրը սահմանազատման գործընթացի քաղաքական հենքն է,

- տարածաշրջանային տնտեսական և տրանսպորտային ենթակառուցվածքները պետք է ապաշրջափակվեն՝ համաձայն երկու երկրների ինքնիշխանության և իրավազորության հարգման, փոխադարձության և հավասարության սկզբունքների:

Այս սկզբունքները համաձայնեցվել են 2022 թվականի հոկտեմբերի 6-ի Պրահայի քառակողմ, 2022 թվականի հոկտեմբերի 31-ի Սոչիի եռակողմ, ինչպես նաև 2023 թվականի մայիսի 14-ի և հուլիսի 15-ի Բրյուսելի եռակողմ հանդիպումների ընթացքում և ամրագրվել են համապատասխան հայտարարություններով: Բացի Եվրոպայի խորհրդի նախագահի միջնորդությամբ՝ մայիսի 14-ին և հուլիսի 15-ին Բրյուսելում տեղի ունեցած հանդիպումներից, 2023 թվականին ՀՀ վարչապետի և Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել ևս երեք հանդիպում, այդ թվում՝ մեկ եռակողմ հանդիպում ԱՄՆ պետքարտուղարի միջնորդությամբ (փետրվարի 18-ին Մյունխենում), մեկ եռակողմ հանդիպում ՌԴ նախագահի միջնորդությամբ (մայիսի 25-ին Մոսկվայում) և մեկ հնգակողմ հանդիպում Ֆրանսիայի նախագահի, Գերմանիայի կանցլերի և Եվրոպական խորհրդի նախագահի միջնորդությամբ (հունիսի 1-ին Քիշնևում):

Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները երկու անգամ բանակցություններ են ունեցել ԱՄՆ միջնորդությամբ (մայիսի 1-4-ը և հունիսի 27-29-ը), երկու անգամ հանդիպել են նաև ՌԴ արտաքին գործերի նախարարի միջնորդությամբ (մայիսի 19 և հուլիսի 25): Նախարարները և նրանց գլխավորած պատվիրակությունները «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» երկկողմ համաձայնագրի նախագծի որոշ հոդվածների շուրջ կարողացել են գրանցել առաջընթաց, սակայն մի շարք սկզբունքային հարցերում չի հաջողվել հասնել փոխըմբռնման:

Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները ոչ պաշտոնական երկկողմ շփումներ են ունեցել նաև հոկտեմբերի 23-ին Թեհրանում՝ «3+3» ձևաչափով նախարարական հանդիպման շրջանակներում:

Հուլիսի 12-ին և նոյեմբերի 30-ին տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի չորրորդ և հինգերորդ հանդիպումները:

Նոյեմբերի 30-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ դեկտեմբերի 14-ին երկու երկրների կառավարությունների կողմից հաստատվել է ՀՀ և ԱՀ միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովների միջև նիստերի և համատեղ աշխատանքային հանդիպումների կազմակերպման և անցկացման աշխատակարգը:

Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանազատման վերաբերյալ դրույթը տեղ է գտել նաև հոկտեմբերի 5-ին Գրանադայում կայացած քառակողմ հանդիպման արդյունքում ընդունված հայտարարության մեջ, որում, մասնավորապես, ընդգծվում է սահմանների սահմանազատման ուղղությամբ աշխատելու հրատապ անհրաժեշտությունը՝ հիմնվելով կողմերին տրամադրված ԽՍՀՄ գլխավոր շտաբի ամենավերջին քարտեզների վրա, որոնք պետք է նաև հիմք հանդիսանան ուժերի հետքաշման, խաղաղության պայմանագիրը վերջնական տեսքի բերելու և հումանիտար բոլոր խնդիրները լուծելու համար:

2023 թվականին տեղի է ունեցել ՀՀ, ՌԴ և ԱՀ փոխվարչապետերի համանախագահությամբ տարածաշրջանային տնտեսական և տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման եռակողմ աշխատանքային խմբի մեկ նիստ (ստեղծման օրվանից ի վեր տեղի է ունեցել 12 նիստ):

Հաշվետու տարում Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների մակարդակով կայացած հանդիպումների ընթացքում կողմերը համաձայնեցրել են ապաշրջափակման սկզբունքները՝ հաստատելով, որ բոլոր ենթակառուցվածքները պետք է գործեն երկրների ինքնիշխանության, իրավազորության ներքո և հավասարության ու փոխադարձության սկզբունքների հիման վրա: Նշյալ սկզբունքները քննարկվել և դրանց վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել նաև ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի և Ադրբեջանի նախագահի խորհրդականի հանդիպումների ընթացքում:

Ապաշրջափակման համատեքստում հոկտեմբերին ՀՀ վարչապետի կողմից հրապարակվել է հայկական կողմի մշակած և խաղաղության օրակարգի կարևոր բաղադրիչ հանդիսացող «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, որով հստակ նկարագրվում են տարածաշրջանում տրանսպորտային և այլ ենթակառուցվածքային կապերի ապաշրջափակման հեռանկարը, կառուցվածքը, տրամաբանությունը և հիմնական սկզբունքները:

Դեկտեմբերի 7-ին ՀՀ վարչապետի և ԱՀ նախագահի աշխատակազմերը համատեղ հայտարարություն են ընդունել, որով վերահաստատել են ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքների հարգման հիման վրա Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները կարգավորելու և խաղաղության պայմանագրի կնքմանը հասնելու իրենց

մտադրությունը: Հայաստանն իր աջակցությունն է հայտնել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանը («COP 29») հյուրընկալելու նպատակով Ադրբեջանի ներկայացրած հայտին՝ հանելով իր թեկնածությունը: Ադրբեջանն իր հերթին աջակցություն է հայտնել Արևելյան Եվրոպայի խմբի «COP»-ի բյուրոյին անդամակցելու համար առաջադրված՝ ՀՀ թեկնածությանը:

Ադրբեջանն ազատ է արձակել 32 հայ զինծառայող: Հայաստանն իր հերթին ազատ է արձակել ադրբեջանցի 2 զինծառայող:

Այդուհանդերձ, Ադրբեջանը շարունակում է պատանդառության մեջ պահել 23 անձ, որոնցից 16-ը գերության մեջ են հայտնվել սեպտեմբերի 19-ի ռազմական գործողությունների հետևանքով: Կան փաստական տվյալներ առնվազն 32 անձանց՝ 2020 թվականի պատերազմից հետո բռնի անհետացման վերաբերյալ, որոնց ճակատագրի մասին Ադրբեջանը տվյալներ չի հաղորդում: Շարունակում է բաց մնալ 2020 թվականի 44-օրյա պատերազմում և դրանից հետո անհետ կորած համարվող 215 և 1990-ականներին անհետ կորած 777 ՀՀ քաղաքացիների և ԼՂ հայերի ճակատագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակվել են Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետություն միջև առանձնահատուկ հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքները, տեղի են ունեցել բարձրաստիճան մի շարք հանդիպումներ:

Հունվարի 31-ին ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի և ԻԻՀ նախագահի տեղակալ Սեյեդ Մասուդ Միրքազեմիի համանախագահությամբ Թեհրանում կայացել է Հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստի պայմանավորվածությունների ընթացքը մշտադիտարկող հանձնախմբի նիստը:

Փետրվարի 27-ին Ժնևում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ: Կողմերը քննարկել են երկկողմ և բազմակողմ փոխգործակցությանն առնչվող հարցեր: Կարևորվել է համատեղ ջանքերի ներդրումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ ներառյալ էներգետիկայի, տրանսպորտի և ենթակառուցվածքների ոլորտներում համագործակցության հետագա զարգացման ուղղությամբ:

Մարտի 22-ին Երևանում կայացել են ՀՀ և ԻԻՀ ԱԳ նախարարությունների միջև հերթական քաղաքական խորհրդակցությունները՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի և ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Ալի Բաղերի Քանիի գլխավորությամբ: Քննարկվել է երկկողմ քաղաքական օրակարգի հարցերի լայն շրջանակ, անդրադարձ է կատարվել Հայաստանի և Իրանի միջև

քաղաքական, առևտրատնտեսական, տարածաշրջանային անվտանգության, բազմակողմ հարթակներում համագործակցության հարցերին:

Ապրիլի 9-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն Իրանում հանդիպել է ԻԻՀ ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Ծամխանիի հետ:

Ապրիլի 20-ին Երևանում կայացել են Հայաստանի, Իրանի և Հնդկաստանի ԱԳ նախարարությունների միջև եռակողմ ձևաչափով առաջին քաղաքական խորհրդակցությունները: Հանդիպմանը քննարկվել են տնտեսական, տարածաշրջանային հաղորդակցային ուղիներին առնչվող հարցեր, նախանշվել են մշակութային և միջմարդկային կապերի խորացման և տարբեր ոլորտներում եռակողմ համագործակցության հեռանկարները:

Հուլիսի 24-ին Թեհրանում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի առանձնազրույցը և երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ ընդլայնված կազմով հանդիպումը: ՀՀ ԱԳ նախարարին ընդունել է նաև ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռայիսին: Մտքեր են փոխանակվել երկկողմ հավակնոտ օրակարգը կյանքի կոչելու, բարձր մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքի շուրջ: Ընդգծվել է երկու երկրների միջև առևտրատնտեսական, էներգետիկ և տրանսպորտային ոլորտներում ընթացիկ ու նախանշված համատեղ նախագծերի իրականացման կարևորությունը:

Սեպտեմբերի 19-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ: Քննարկվել են Հարավային Կովկասում կայունությանն ու անվտանգությանն առնչվող հարցեր:

Հոկտեմբերի 1-2-ը կայացել է ՀՀ ԱԽ քարտուղարի հերթական այցը Թեհրան, որի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ԻԻՀ նախագահի, Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի, ԱԳ նախարարի և ԶՈՒ ԳՇ պետի հետ:

Հոկտեմբերի 23-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Թեհրանում մասնակցել է տարածաշրջանային խորհրդակցական հարթակի («3+3») ձևաչափով հանդիպմանը, որի շրջանակում կայացել է նաև հանդիպում ԻԻՀ նախագահի հետ: Հանդիպման շրջանակում ստորագրվել է համատեղ հայտարարություն:

Դեկտեմբերի 27-ին պատասխան այցով ՀՀ է ժամանել ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը: ԻԻՀ ԱԳ նախարարին ընդունել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը և ԱԽ քարտուղար

Արմեն Գրիգորյանը: Քննարկվել է երկկողմ և բազմակողմ օրակարգին, տարածաշրջանային խնդիրներին առնչվող հարցերի շրջանակ:

Տարվա ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԻԻՀ նախագահ Սեյեդ Էբրահիմ Ռայիսիի, ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ ունեցել են երկուական հեռախոսազրույց: Քննարկվել են տարածաշրջանում ստեղծված իրավիճակին, ինչպես նաև Հայաստան-Իրան երկկողմ օրակարգին վերաբերող հարցեր:

2023թ. Իրանի Իսլամական Հանրապետություն են այցելել ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, Ծրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, իսկ Հայաստանի Հանրապետություն՝ ԻԻՀ կոոպերացիայի, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարար Սեյեդ Սոուլաթ Մորթազավին և Ճանապարհների և քաղաքաշինության նախարար Մեհրդադ Բազրփաշը:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանը և Թուրքիան շարունակել են երկու երկրների հարաբերությունների ամբողջական կարգավորմանը միտված գործընթացը:

Հունվարի 6-ին թուրքական կողմը տեղեկացրել է, որ վերացվել են երկու երկրների միջև ուղիղ օդային բեռնափոխադրումներ կատարելու համար նախկինում առկա արգելքները:

Փետրվարի 6-ին Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից երկու օր անց՝ փետրվարի 8-ին, ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության որոնողափրկարարական թիմը գործուղվել է Թուրքիայի Ադըյաման քաղաք և մասնակցել երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներին:

Փետրվարի 11-ին Մարգարայի կամրջով 100 տոննա մարդասիրական բեռով 5 հայկական բեռնատար հատել է հայ-թուրքական սահմանը՝ ուղևորվելով աղետի գոտի: Փետրվարի 14-ին ՀՀ-ն 2 բեռնատարով (12 տոննա) երկրորդ մարդասիրական օգնությունն է ուղարկել Թուրքիա՝ կրկին Մարգարայի կամրջով:

Փետրվարի 15-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Թուրքիա: Անկարայում տեղի է ունեցել ՀՀ և Թուրքիայի ԱԳ նախարարների առանձնազրույցը, որին հաջորդել է ընդլայնված կազմով հանդիպումը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև համատեղ ջանքերով վերանորոգել Անիի պատմական կամուրջը: Նույն օրը ԱԳ նախարար Միրզոյանն Անկարայից մեկնել է աղետի գոտի՝ Ադըյաման, որտեղ հանդիպել է

ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության որոնողափրկարարական թիմին:

Փետրվարի 16-ին հայ փրկարարները ցամաքային ճանապարհով Աղըյամանից վերադարձել են Երևան՝ հատելով Ալիջան-Մարգարա սահմանային անցակետը:

Մայիսի 4-ին ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն Անկարայում մասնակցել է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի (ՍԾՏՀԿ ԽՎ) անդամ երկրների խորհրդարանների նախագահների գագաթնաժողովին: Այցի ընթացքում Ալեն Սիմոնյանը երկկողմ հանդիպում է ունեցել Թուրքիայի խորհրդարանի նախագահի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացին, ինչպես նաև տարածաշրջանային և հումանիտար հարցերին առնչվող թեմաներ:

Հունիսի 3-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն Անկարայում մասնակցել է Թուրքիայի վերընտրված նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի պաշտոնումուտի արարողությանը:

Հոկտեմբերի 23-ին Թեհրանում տարածաշրջանային խորհրդակցական հարթակի («3+3») հանդիպման շրջանակում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԹՀ ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի հանդիպումը: Քննարկվել են ընթացիկ տարածաշրջանային և երկկողմ օրակարգային հարցեր:

Տարվա ընթացքում ՀՀ վարչապետի և ԹՀ նախագահի միջև տեղի է ունեցել երեք հեռախոսազրույց՝ փետրվարի 7-ին, հունիսի 28-ին և սեպտեմբերի 11-ին: Ղեկավարներն ընդգծել են տարածաշրջանում երկարատև խաղաղություն և կայունություն հաստատելու, ինչպես նաև երկկողմ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը:

Հայաստանի և Թուրքիայի ԱԳ նախարարներն ունեցել են երկու հեռախոսազրույց՝ հունիսի 7-ին և սեպտեմբերի 27-ին: Կողմերն արտահայտել են իրենց պատրաստակամությունը՝ երկու երկրների միջև հարաբերությունների ամբողջական կարգավորման ուղղությամբ աշխատանքները շարունակելու վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում ՀՀ ԱԳ նախարարությունը շարունակել է ջանքեր գործադրել ՀՀ և ՌԴ միջև դաշնակցային և ռազմավարական գործընկերության հարաբերությունների ամրապնդմանն ուղղությամբ:

Մարտի 20-ին Մոսկվայում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ:

ՀՀ և ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև կայացել են մի շարք թեմատիկ խորհրդակցություններ:

Մարտի 28-ին Երևանում անցկացվել է հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստը:

Մայիսի 25-ին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին մասնակցելու նպատակով Մոսկվա կատարած աշխատանքային այցի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Հունիսի 7-ին Սոչիում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Եվրասիական միջկառավարական խորհրդի և ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերին, որոնց շրջանակներում կայացել է հանդիպում ՌԴ նախագահի հետ:

Հուլիսի 21-ին ՌԴ Իրկուտսկ քաղաքում անցկացվել է ՀՀ և ՌԴ միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ նիստը՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի և ՌԴ Դաշնային ժողովի Դաշնային խորհրդի նախագահի տեղակալի համանախագահությամբ:

Օգոստոսի 24-ին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում Ծաղկաձորում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինի հանդիպումը:

Սեպտեմբերի 8-ին կայացել է հայ-ռուսական առաջին մեդիա ֆորումը՝ Հայաստանի և Ռուսաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների, ականավոր քաղաքագետների և փորձագետների մասնակցությամբ:

Դեկտեմբերի 15-ին Երևանում տեղի է ունեցել ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 22-րդ նիստը:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերին օժանդակելու նպատակով՝ նոյեմբերի 22-ին ՌԴ կառավարության կողմից տրամադրվել է 40 տոննա հումանիտար օգնություն:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարին բացառիկ է եղել Հայաստան-ԱՄՆ հարաբերությունների համար: Շարունակվել են բարձր մակարդակով ակտիվ շփումները Միացյալ Նահանգների հետ:

Հաշվետու տարում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի 8 հեռախոսազրույց:

Հունվարի 6-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) կառավարիչ Սամանթա Փաուերի հեռախոսազրույցը:

Հունվարի 10-ին և փետրվարի 10-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույցներ է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերընն Դոնֆրիդի հետ:

Փետրվարի 18-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի, ԱՄՆ պետքարտուղարի և ԱՀ նախագահի եռակողմ հանդիպումը:

Մարտի 29-ին ՀՀ վարչապետը մասնակցել և ելույթներով է հանդես եկել ԱՄՆ նախագահի նախաձեռնած Հանուն ժողովրդավարության երկրորդ գագաթնաժողովին, որն անցկացվել է առցանց ձևաչափով:

Ապրիլի 7-ին Երևանում՝ Հայաստան-ԱՄՆ Ռազմավարական երկխոսության շրջանակում կայացել է տնտեսության և էներգետիկայի հարցերով աշխատանքային խմբի, իսկ մայիսի 17-18-ը՝ արդարադատության և իրավապահ մարմինների ու ժողովրդավարության հարցերով աշխատանքային խմբերի նիստերը: ԱՄՆ պատվիրակությունը գլխավորել է ԱՄՆ Առևտրի քարտուղարի գլոբալ շուկաների գծով տեղակալ Առուն Վենկատարամանը, որին ընդունել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ապրիլի 12-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Դերեք Հոգանի հետ:

Ապրիլի 18-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Էրիկա Օլսոնին:

Մայիսի 1-ին ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում կայացել է ՀՀ ԱԳ նախարարի և ԱՄՆ պետքարտուղարի հանդիպումը: ԱԳ նախարար Միրզոյանը և Ադրբեջանի ԱԳ նախարար Բայրամովը մայիսի 1-4-ը Արլինգթոնում (ԱՄՆ Վիրջինիա նահանգ) անցկացրել են բանակցություններ:

Մայիսի 13-ին և հունիսի 6-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Դերեք Հոգանի հետ:

Զրուցակիցները քննարկել են տարածաշրջանային կայունության և անվտանգության հարցեր:

Մայիսի 26-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԱՄՆ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Լուիս Բոնոյին:

Հունիսին Հայաստան ժամանած ԱՄՆ Կանզաս նահանգի նահանգապետ Լաուրա Քելլին և Կանզասի Ազգային գվարդիայի հրամանատար, գեներալ-մայոր Մայքլ Վերներդին ընդունել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հունիսի 27-29-ը ՀՀ ԱԳ նախարարը և Ադրբեջանի ԱԳ նախարարը Վիրջինիա նահանգի Արլինգթոն քաղաքի Ջորջ Ծուլցի արտաքին գործերի ազգային ուսումնական կենտրոնում անցկացրել են երկկողմ բանակցություններ: Վաշինգտոնում ԱԳ նախարարները հանդիպել են ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի և ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ:

Հունիսի 29-30-ը Հայաստան է այցելել ԱՄՆ պետքարտուղարության պատժամիջոցների համակարգման գրասենյակի ղեկավար Ջեյմս Օ՛Բրայենի գլխավորած պատվիրակությանը:

Օգոստոսի 9-ին և սեպտեմբերի 7-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Յուրի Քիմի հետ: Նախարար Միրզոյանը ներկայացրել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետևանքով Լեռնային Ղարաբաղում սրվող իրավիճակը:

Սեպտեմբերի 20-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 78-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել է «Ժողովրդավարության արդյունքները» համաժողովին: Մինչև համաժողովի մեկնարկը նախարար Միրզոյանը զրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի և ԱՄՆ ՄԶԳ կառավարիչ Սամանթա Փաուերի հետ:

Սեպտեմբերի 19-ին և 22-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 78-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպումներ է ունեցել ԱՄՆ Պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով օգնական Յուրի Քիմի հետ:

Սեպտեմբերի 25-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԱՄՆ սենատոր Գերի Փիթերսին և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ղեկավար Սամանթա Փաուերի գլխավորած պատվիրակությանը:

Հոկտեմբերի 11-ին և դեկտեմբերի 7-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ընդունել է ԱՄՆ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Լուիս Բոնոյին:

Հոկտեմբերի 24-26-ը տարածաշրջանային այցի շրջանակներում Հայաստան է այցելել ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Ջոշուա Հաքը, որի ընթացքում հանդիպել է ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի հետ:

Նոյեմբերի 29-ին ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի հետ: Հանդիպումը կայացել է Սկոպյեում՝ ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակվել են աշխատանքները Հայաստանի և Եվրոպական միության գործընկերության ամրապնդման, ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախանշված բարեփոխումների իրականացման, տարածաշրջանային անվտանգային հարցերի շուրջ Հայաստանի դիրքորոշման ներկայացման, Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիայի վերաբերյալ համարժեք արձագանքների ապահովման և մի շարք այլ ուղղություններով:

Հունվարի 26-ին Երևանում կայացել է ՀՀ-ԵՄ քաղաքական և անվտանգային հարցերով երկխոսության անդրանիկ նիստը, իսկ նոյեմբերի 15-ին Բրյուսելում՝ երկրորդ նիստը:

Մարտի 9-ին կայացել է ՀՀ-ԵՄ խորհրդարանական գործընկերության կոմիտեի 3-րդ նիստը:

Մարտի 28-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ մաքսային հարցերով ենթակոմիտեի նիստը:

Հունիսի 27-28-ը Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի նիստը:

Սեպտեմբերի 20-ին տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Զբաղվածության և սոցիալական հարցերի, առողջապահության, վերապատրաստման և կրթության, տեղեկատվական հասարակության և աուդիովիզուալ քաղաքականության, գիտության և տեխնոլոգիաների, մշակույթի, երիտասարդության հարցերով (Մարդկանց միջև շփումների) ենթակոմիտեի նիստը:

Հոկտեմբերի 13-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի գործողության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ենթակոմիտեի նիստը:

Հոկտեմբերի 17-ին Երևանում կայացել է ՀՀ-ԵՄ առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի, հոկտեմբերի 19-ին՝ ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի դյուրացման հարցերով համատեղ կոմիտեի, իսկ հոկտեմբերի 25-ին՝ ՀՀ-ԵՄ Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի նիստերը:

ՀՀ-ԵՄ բազմաշերտ համագործակցության խորացման համատեքստում կայացել են մի շարք բարձրաստիճան փոխայցելություններ, հանդիպումներ միջազգային հարթակներում և հեռախոսազրույցներ:

Հունվարի 24-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Բրյուսել, որի շրջանակներում նախարար Միրզոյանը ելույթով հանդես է եկել Եվրոպական խորհրդարանի արտաքին հարցերով մշտական հանձնաժողովում կայացած քննարկման ընթացքում: Այցի շրջանակներում կայացել են նաև Արարատ Միրզոյանի հանդիպումները ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի և Հարավային Կովկասում ու Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի հետ:

Փետրվարի 16-17-ը Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում կայացել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումները Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի և Եվրապոլ գործակալության գործադիր տնօրեն Քեթրին Դը Բոլի հետ:

Փետրվարի 21-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԵՄ արտաքին գործողությունների եվրոպական ծառայության քաղաքացիական գործողությունների հրամանատար Ստեֆանո Տոմատի գլխավորած պատվիրակությանը:

Մարտի 3-ին աշխատանքային այցով Նյու-Դելիում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

Մարտի 25-ին, մարտի 30-ին, ապրիլի 24-ին, ապրիլի 26-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույցներ է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Մայիսի 13-ին աշխատանքային այցով Բրյուսելում գտնվող ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ոչ պաշտոնական հանդիպում է ունեցել Եվրոպական

խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ, որին հաջորդել է Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ եռակողմ հանդիպումը:

Մայիսի 24-25-ը կայացել է ԵՄ պատժամիջոցների կիրարկման հարցերով միջազգային հատուկ բանագնաց Դեյվիդ Օ՛Սալիվանի այցը Հայաստան:

Հունիսի 1-ին ՀՀ վարչապետը մասնակցել է Քիշնևում ընթացող «Եվրոպական քաղաքական համայնքի» երկրորդ գագաթնաժողովին, որի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի և Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի մասնակցությամբ հնգակողմ հանդիպումը:

Հունիսի 1-4-ը կայացել է Եվրոպական խորհրդի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով աշխատանքային խմբի, իսկ հունիսի 19-22-ը՝ Եվրոպական խորհրդարանի անվտանգության և պաշտպանության հարցերով ենթակոմիտեի պատվիրակության այցերը Հայաստան:

Հունիսի 26-28-ը կայացել է Իրավապահ ոլորտում համագործակցության ԵՄ գործակալության (Եվրապոլ) գործադիր տնօրեն Քեթրին Դը Բոլի այցը Հայաստան, որի ընթացքում վերջինիս ընդունել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հուլիսի 15-ին աշխատանքային այցով Բրյուսելում գտնվող ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ, որին հաջորդել է Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ եռակողմ հանդիպումը:

Օգոստոսի 2-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

Սեպտեմբերի 19-ին ՄԱԿ ԳԱ 78-րդ նստաշրջանի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

Հոկտեմբերի 5-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Իսպանիայում մասնակցել է «Եվրոպական քաղաքական համայնքի» երրորդ գագաթնաժողովին, որի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետի հանդիպումը Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հետ, որի արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն: Գագաթնաժողովի շրջանակներում կայացել է

նաև ՀՀ վարչապետի առանձնազրույցը Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ:

Հոկտեմբերի 6-ին կայացել է Ճգնաժամի հաղթահարման հարցերով ԵՄ հանձնակատար Յանեզ Լենարչիչի այցը Հայաստան:

Հոկտեմբերի 16-17-ը կայացել է ՀՀ վարչապետի այցը Եվրոպական խորհրդարան: Նիկոլ Փաշինյանը ելույթով հանդես է եկել Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստի ընթացքում, ինչպես նաև առանձնազրույց է ունեցել Եվրոպական խորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլայի հետ:

Նոյեմբերի 15-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի աշխատանքային այցը Բրյուսել, որի ընթացքում նախարար Միրզոյանը ելույթով հանդես է եկել ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի գլխավոր վեհաժողովի տարեկան հանդիպմանը:

Նոյեմբերի 22-23-ը կայացել են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ԵՄ երկրների ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ դեսպանների մի շարք բարձաստիճան հանդիպումները:

Նոյեմբերի 27-29-ը կայացել է Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության և Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների հարցերով, միգրացիայի և ներքին գործերի, հետազոտությունների և նորարարության, միջազգային գործընկերության գլխավոր տնօրինությունների համատեղ պատվիրակության այցը Հայաստան:

Դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցելել է Բրյուսել, որի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել է ԵՄ Արևելյան գործընկերության արտաքին գործերի նախարարների հանդիպմանը, ինչպես նաև ԵՄ անդամ երկրների ԱԳ նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը:

Տարին նշանավորել է նաև Հայաստանում Եվրոպական միության քաղաքացիական դիտորդական առաքելության տեղակայմամբ: Վերջինս գործունեության մեկնարկը տրվել է փետրվարի 20-ին՝ երկու տարի ժամկետով:

Հաշվետու տարում շարունակվել է նաև արդյունավետ համագործակցությունը Եվրոպական խորհրդարանի հետ: Մասնավորապես, հունվարի 18-ի Եվրոպական խորհրդարանի նիստում ընդունվել է «Ընդհանուր արտաքին ու անվտանգային քաղաքականության իրականացում. 2022թ. տարեկան զեկույց» բանաձևը (CFSP) (զեկուցող՝ AFET նախագահ Դեյվիդ Մքալիսթեր (David McAllister, ԵԺԿ, Գերմանիա)), որում, ի թիվս այլ ուղերձների, դատապարտվում է Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիան և վերահաստատվում, որ Հայաստանի տարածքային ամբողջականությունը պետք է լիարժեքորեն հարգվի:

Բացի այդ, մարտի 15-ին Եվրոպական խորհրդարանում ընդունվել են Հայաստանի, ինչպես նաև Ադրբեջանի վերաբերյալ զեկույցները, որոնցում Եվրոպական խորհրդարանը դատապարտում է Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ագրեսիան:

Մարտի 28-ին Եվրոպական խորհրդարանի լիագումար նստաշրջանի ընթացքում ընդունվել է «The implementation of civilian CSDP and other EU civilian security assistance» խորագրով զեկույցը, որում անդրադարձ է կատարվում նաև Հայաստանում ԵՄ առաքելության տեղակայմանը:

Հոկտեմբերի 3-ին կայացել է հերթական հրատապ քննարկումը՝ նվիրված Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին, որի ընթացքում ընդունվել է «Situation in Nagorno-Karabakh after Azerbaijan's attack and the continuing threats against Armenia» խորագրով բանաձևը:

Հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է հայկական կողմի բարձրաստիճան մասնակցությունը Արևելյան գործընկերության ձևաչափի շրջանակներում կազմակերպվող հանդիպումներին (Փետրվարի 19-21-ը Քիշնևում կայացել է «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի 10-րդ լիագումար նստաշրջանը, մարտի 30-ին և նոյեմբերի 15-ին կայացել են ԱԼԳ Ավագ պաշտոնյաների հանդիպումները, դեկտեմբերի 11-ին՝ ԱԼԳ երկրների ԱԳ նախարարների հանդիպումը, ինչպես նաև մի շարք ոլորտային հանդիպումներ):

Նոյեմբերի 29-ին Երևանում մեկնարկել է ԵՄ Արևելյան գործընկերության Տնտեսական և ներդրումային ծրագրից բխող ուղենշային նախաձեռնությունների իրագործման խթանմանն ուղղված ՀՀ–ԵՄ ներդրումների համակարգման հարթակին:

Նոյեմբերի 20-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանում ԵՄ առաքելության կարգավիճակի» վերաբերյալ համաձայնագիրը:

Դեկտեմբերի 12-ին Եվրոպական միության արտաքին գործերի խորհուրդը համաձայնություն է տվել Հայաստանում ԵՄ առաքելության անձնակազմի թվաքանակի ավելացմանը՝ 138-ից հասցնելով 209-ի:

ՀԱՅԱՍՏԱՆ – ՖՐԱՆՍԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում Հայաստան-Ֆրանսիա առանձնաշնորհյալ հարաբերությունները շարունակել են նույն ինտենսիվությամբ խորանալ:

Հունվարի 12-13-ը առաջին անգամ պաշտոնական այցով Հայաստանում է գտնվել Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Յաել Բրաուն Պիվեն:

Փետրվարի 6-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

Փետրվարի 17-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի երկկողմ հանդիպումը Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

Մարտի 28-31-ը տեղի է ունեցել Ֆրանսիայի Օվերնյը-Ռոն-Ալպ շրջանի նախագահ Լորան Վոքիե գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, որի շրջանակում ստորագրվել է Սյունիքի մարզի և Օվերնյը-Ռոն-Ալպ շրջանի միջև համագործակցության հուշագիր:

Ապրիլի 22-25-ը տեղի է ունեցել Ֆրանսիայի Սենատի Հանրապետականների խմբի ղեկավար Բռունո Ռըտայոյի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

Ապրիլի 27-28-ին տեղի է ունեցել Ֆրանսիայի ԱԳ նախարար Կատրին Կոլոննայի աշխատանքային այցը Հայաստան:

Մայիս 1-3-ը տեղի է ունեցել Ֆրանսիայի Օ-դը-Ֆրանս շրջանի նախագահ Քզավիե Բերտրանի այցը Հայաստան, որի ընթացքում Օ-դը-Ֆրանս շրջանի և Վայոց ձորի մարզի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Մայիսի 17-ին Ռեյկյավիկում ԵԽ գագաթնաժողովի, հունիս 1-ին Քիշնևում ԵՔՀ 2-րդ գագաթաժողովի, հոկտեմբեր 5-ին Գրանադայում ԵՔՀ 3-րդ գագաթաժողովի, ինչպես նաև նոյեմբերի 9-ին Փարիզի Խաղաղության ֆորումի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

Հունիսի 18-19-ը տեղի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի աշխատանքային այցը Ֆրանսիա:

Հունիսի 27-29-ը տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի աշխատանքային այցը Ֆրանսիա:

Հուլիսի 6-ին և օգոստոսի 24-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ֆրանսիայի ԱԳ նախարար Կատրին Կոլոննայի հետ:

Հուլիսի 10-13-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի աշխատանքային այցը Ֆրանսիա:

Օգոստոսի 1-ին Երևանում բացվել է Ֆրանսիայի պաշտպանական առաքելությունը և նույն օրը նշանակվել է ՀՀ-ում առաջին ռեզիդենտ ռազմական կցորդը՝ փոխգնդապետ Առնո Էլլին:

Օգոստոսի 30-31-ը Փարիզի քաղաքապետ Անն Հիդալգոյի գլխավորած պատվիրակությունն այցով ժամանել է Հայաստան՝ հումանիտար շարասյուն ուղղելով Լաչինի միջանցքի արգելափակման պատճառով ամիսներ ի վեր շրջափակված ԼՂ հայությանը:

Սեպտեմբերի 9-ին, 19-ին, 21-ին, 27-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույցներ է ունեցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

Սեպտեմբերի 13-16-ը Հայաստան է այցելել Ֆրանսիայի Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ժան-Լուի Բուրլանժը:

Հոկտեմբերի 3-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Կատրին Կոլոննան աշխատանքային այցով գտնվել է Հայաստանում:

Հոկտեմբեր 23-24-ը տեղի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի աշխատանքային այցը Ֆրանսիա, որի ընթացքում Ֆրանսիայի հետ ստորագրվել են պաշտպանական զինտեխնիկայի մատակարարման մասին համաձայնագրեր:

Հոկտեմբերի 26-27-ը տեղի է ունեցել Ֆրանսիայի մշակույթի նախարար Ռիմա Աբդուլ Մալակի այցը Հայաստան, որի ընթացքում մի շարք կոնկրետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման, երաժշտության, կինոյի ոլորտներում առաջիկայում Հայաստան-Ֆրանսիա համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Դեկտեմբերի 11-ին Բրյուսելում ԵՄ արտաքին գործերի նախարարների խորհրդի շրջանակներում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի ԱԳ նախարար Կատրին Կոլոննայի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԳԵՐՄԱՆԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձնանշելի էր տարին Հայաստան–Գերմանիա հարաբերություններում բարձրաստիճան երկխոսության ինտենսիվության առումով, ինչը չի սահմանափակվել երկկողմ ձևաչափով:

Հունվարի 13-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հեռախոսազրույց է ունեցել Գերմանիայի նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ:

Փետրվարի 6-7-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Գերմանիա և նրա հանդիպումները ԳԴՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ:

Մարտի 2-3-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Գերմանիա: Այցի ընթացքում կայացել են հանդիպումներ դաշնային կանցլեր Օլաֆ Շոլցի, դաշնային նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի, Բունդեսթագի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի, Գերմանիա-Հարավային Կովկաս բարեկամության խմբի անդամների, ԳԴՀ Արևելյան հանձնաժողովի և գերմանական առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ: ՀՀ վարչապետը մասնակցել է «Անվտանգությունը և կայունությունը Հարավային Կովկասում. Հայաստանի հեռանկարը» թեմայով քննարկմանը: Վարչապետը հանդիպել է նաև Գերմանիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Մարտի 28-29-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակության այցը Գերմանիա: Այցի ընթացքում կայացել են հանդիպումներ Բունդեսթագի նախագահ Բերբել Բասի, Բունդեսթագի ԵՄ հարցերով հանձնաժողովի նախագահ Անտոն Հոֆրայթերի և այլ քաղաքական և հասարակական գործիչների հետ:

Հունիսի 18-19-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի աշխատանքային այցը Գերմանիա: Կայացել են նրա մի շարք հանդիպումները, այդ թվում՝ ԳԴՀ նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի, Բեռլինի քաղաքապետ Կայ Վեգների հետ:

Հուլիսի 13-ին տարածաշրջանային այցով Հայաստան ժամանած ԳԴՀ ԱԳ պետնախարար Թոբիաս Լինդներին ընդունել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հուլիսի 17-ին Երևանում տեղի են ունեցել Հայաստանի և Գերմանիայի ԱԳՆ-երի միջև հերթական քաղաքական խորհրդակցությունները:

Սեպտեմբերի 5-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ԳԴՀ ԱԳ նախարար Անալենա Բերբոքի հետ:

Սեպտեմբերի 9-ին և 22-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույցներ է ունեցել դաշնային կանցլեր Օլաֆ Շոլցի հետ:

Նոյեմբերի 3-ին տեղի է ունեցել ԳԴՀ ԱԳ նախարար Անալենա Բերբոքի աշխատանքային այցը Հայաստան:

Նոյեմբերի 21-22-ը Երևանում կայացել են ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի հերթական բանակցությունները:

Նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել ԳԴՀ արտաքին հետախուզության ծառայության նախագահ Բրունո Կալի այցը Հայաստան: Այցի ընթացքում կայացել է հանդիպում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աննախադեպ էր տարին Միացյալ Թագավորության հետ երկկողմ հարաբերությունները զարգացնելու և խորացնելու տեսանկյունից:

Հունվարի 18-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Միացյալ Թագավորության Եվրոպայի հարցերով պետնախարար Լեո Դոքերթիի հետ:

Մայիսի 4-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը բրիտանական կողմի հրավերով աշխատանքային այց է կատարել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն՝ Չարլզ Երրորդի թագադրության հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար:

Սեպտեմբերի 28-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույցներ է ունեցել Ծվեդիայի ԱԳ նախարար Թոբիաս Բիլստրյոմի, Միացյալ Թագավորության Եվրոպայի հարցերով պետնախարար Լեո Դոքերթիի հետ:

Հոկտեմբերի 5-ին նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Քենթերբերիի արքեպիսկոպոս Ջասթին Ուելբիի գլխավորած պատվիրակությանը:

Հոկտեմբերի 10-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Միացյալ Թագավորության արտաքին, համագործակցության և զարգացման հարցերով պետնախարար Ջեյմս Քլևերլիի հետ:

Հոկտեմբերի 26-ին Լոնդոնում կայացել է հայ-բրիտանական գործարար համաժողովը, որին մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը, ինչպես նաև շուրջ 100 հայ և բրիտանացի գործարարներ և պետական հատվածի ներկայացուցիչներ:

Նոյեմբերի 13-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի՝ Միացյալ Թագավորություն պաշտոնական այցի շրջանակներում տեղի է ունեցել Միացյալ Թագավորությունում Հայաստանի դեսպանության նոր շենքի

պաշտոնական բացման արարողությունը: Նույն օրը Լոնդոնում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Միացյալ Թագավորության Եվրոպայի հարցերով նախարար Լեո Դոքերթիի հանդիպումը, որով տրվել է ՀՀ-ՄԹ ռազմավարական երկխոսության մեկնարկը: Առաջին նիստի արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն:

Նոյեմբերի 14-ին Լոնդոնում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Միացյալ Թագավորության արտաքին, համագործակցության և զարգացման հարցերով ստվերային պետնախարար Դեյվիդ Լամիին:

Նոյեմբերի 20-ին ՀՀ-ում աշխատանքային այցով գտնվող Միացյալ Թագավորության Եվրոպայի հարցերով նախարար Լեո Դոքերթին հանդիպումներ է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՀՀ արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստինե Գրիգորյանի և ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակտիվորեն շարունակվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում եվրոպական այլ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման և խորացման ուղղված աշխատանքները:

Փետրվարի 22-ին Իտալիայի մշակույթի նախարար Ջենարո Սանջուլիանոն այցելել է Հայաստան:

Փետրվարի 28-ին Հռոմում, իսկ ապրիլի 4-ին Երևանում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Իտալիայի ԱԳ նախարարությունների միջև:

Հուլիսի 23-ին նախագահ Վահագն Խաչատուրյանը աշխատանքային այցով մեկնել է Իտալիա:

Նոյեմբերի 9-ին Հայաստան է այցելել Իտալիայի ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, ծովակալ Ջուզեպպե Կավո Դրագոնեն:

Նոյեմբերի 25-ին Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը Իտալիայի Բավենո քաղաքում մասնակցել է Զբոսաշրջության միջազգային ֆորումին:

Հունվարի 19-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Նիդերլանդների Թագավորության ԱԳ նախարար Վոպկե Հուքստրայի հետ:

Հոկտեմբերի 3-ին Երևանում Հայաստանի և Նիդերլանդների արտաքին գործերի նախարարությունների միջև տեղի են ունեցել հերթական քաղաքական խորհրդակցությունները:

Հունվարի 11-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Շվեդիայի ԱԳ նախարար Թոբիաս Բիլստրյոմի հետ:

Մարտի 3-ին «Ռաիսինա երկխոսություն» համաժողովի շրջանակներում (Նյու Դելի), ինչպես նաև մայիսի 17-ին Ռեյկյավիկում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպումներ է ունեցել Շվեդիայի ԱԳ նախարար Թոբիաս Բիլստրյոմի հետ:

Մայիսի 16-ին Ստոկհոլմում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Շվեդիայի արտաքին գործերի գերատեսչությունների միջև:

Օգոստոսի 23-ին և սեպտեմբերի 28-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Շվեդիայի ԱԳ նախարար Թոբիաս Բիլստրյոմի հետ:

Փետրվարի 27-ից մարտի 1-ը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանի գլխավորած պատվիրակությունը այցելել է Իսպանիա՝ մասնակցելու Բարսելոնայում կայանալիք «GSMA Ministerial Programme» համաժողովին:

Հոկտեմբերի 17-ին Իսպանիայի Սենատը միաձայն ընդունել է Լեռնային Ղարաբաղի հայության դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունները դատապարտող հայտարարություն:

Ապրիլի 20-21-ը տեղի է ունեցել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության գլխավոր տնօրեն Պատրիսիա Դանզիի այցը տարածաշրջան, ներառյալ՝ Հայաստան, որի ընթացքում ՀՀ բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպումների հետ մեկտեղ, վերջինս այցելել է նաև մարզեր՝ Գործակալության կողմից իրականացվող ծրագրերի ընթացքին ծանոթանալու նպատակով:

Հունվարի 27-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Իսլանդիայի ԱԳ նախարար Թորդիս Քոլբրուն Գիլֆադոթիրի հետ:

Փետրվարի 16-ին Բելգիայի Ներկայացուցիչների պալատը միաձայն ընդունել է բանաձև «Աջակցելու դաշնային կառավարության դիվանագիտական ջանքերին՝ հասնելու Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության կայուն լուծմանը, ներառյալ Լաչինի միջանցքի բացումը» վերնագրով:

Հունիսի 28-ին Բելգիայի Ֆլանդրիայի խորհրդարանն ընդունել է Արտաքին հարաբերությունների կոմիտեի կողմից հունիսի 13-ին ընդունված՝ պատգամավոր Ալեսիա Կլաեսի (Ֆլամանական ազգայնական պահպանողական «Նոր ֆլամանական ալիանս կուսակցություն» N-VA) հեղինակած «Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության մասին» բանաձևը և երկու լրացում, որով կոչ է արվում անհապաղ բացել Ադրբեջանի կողմից շրջափակված Լաչինի միջանցքը և անհապաղ դուրս բերել ադրբեջանական զորքերը Հայաստանի ինքնիշխան տարածքից:

Օգոստոսի 11-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Բելգիայի ԱԳ նախարար Հաջա Լահբիբի, Իռլանդիայի արտաքին գործերի և պաշտպանության նախարար Միհել Մարտինի հետ:

Օգոստոսի 22-ին տարածաշրջանային այցով Հայաստան է ժամանել Բելգիայի ԱԳ նախարար Հաջա Լահբիբը: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ:

Սեպտեմբերի 26-ին Բելգիայի Թագավորության դեսպան Էրիկ դե Մույնքն իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին: Բելգիայի կառավարության որոշմամբ Հայաստանում բացվել է Բելգիայի ռեզիդենտ դեսպանություն:

Հոկտեմբերի 4-ին Բելգիայի Ֆլանդրիայի խորհրդարանը լիագումար նիստի ընթացքում միաձայն ընդունել է Ալեսիա Կլաեսի (N-VA), Կարլ Վանլյուվեի (N-VA), Սոֆի Յոզենի (N-VA), Օրի Վան դե Վաուերի (CD&V), Կարին Բրաուերսի (CD&V) և Էմիլի Տալպեյի (Open VLD) կողմից հեղինակած «Եվրահանձնաժողովի հետ քաղաքական երկխոսություն Լեռնային Ղարաբաղից փախստականների արտագաղթի և տարածաշրջանում էթնիկ զտումների վտանգի շուրջ» վերնագիրը կրող բանաձևը:

Հունիսի 6-ին տեղի է ունեցել հեռախոսազրույց ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Ավստրիայի ԱԳ նախարար Ալեքսանդր Շալենբերգի միջև:

Հուլիսի 18-ին տեղի է ունեցել ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Վիեննա: Այցի շրջանակներում ստորագրվել է Հայաստան-ԵՄ ռեադմիսիայի համաձայնագրի՝ Հայաստանի և Ավստրիայի միջև կիրարկման արձանագրությունը:

Հոկտեմբերի 19-ին Ավստրիայի Ազգային խորհուրդը լիագումար նիստում միաձայն ընդունել է պատգամավորներ Էվա Էռնստ-Ձիձիչի (իշխող կանաչների կուսակցություն), Գուդրուն Քուգլերի (իշխող ժողովրդական կուսակցություն), Ռոբերտ Լայմերի (ընդդիմադիր Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն), Նիկոլաուս Շերակի (ընդդիմադիր Նեոս կուսակցություն) կողմից ներկայացված

բանաձևը՝ «Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ռազմական գործողությունների դատապարտում և փոքրամասնությունների իրավունքների և մշակութային արժեքների պաշտպանություն» խորագրով:

Հոկտեմբերի 3-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Նորվեգիայի ԱԳ նախարար Աննիկեն Հյուիթֆիլդի հետ:

Ապրիլի 5-ին Կոպենհագենում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

Փետրվարի 22-ին պաշտոնական այց է կատարել Հայաստան Լյուքսեմբուրգի ԱԳ նախարար Ժան Ասելբորնը:

Օգոստոսի 23-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության արտաքին գործերի նախարար Ժան Ասելբորնի հետ:

Սեպտեմբերի 19-ին Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության դեսպան Ալեն դե Մույզերը (նստավայրը՝ Լյուքսեմբուրգ) իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Վահանգն Խաչատուրյանին:

Հոկտեմբերին Հայաստանը Լյուքսեմբուրգում բացել է դիվանագիտական գրասենյակ:

Դեկտեմբերի 11-ին Բրյուսելում ԵՄ արտաքին գործերի նախարարների խորհրդի շրջանակներում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության արտաքին գործերի նախարար Քսավյե Բետելին:

Մարտի 30-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը աշխատանքային այց է կատարել Մալթա:

Հուլիսի 13-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը պաշտոնական այցով գտնվել է Պորտուգալիայում:

Հուլիսի 12-ին Հայաստան է այցելել Սուրբ Աթոռի պետքարտուղար, կարդինալ Պիետրո Պարոլինը:

Ապրիլի 3-ին Հելսինկիում կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի Հանրապետության և Ֆինլանդիայի Հանրապետության արտաքին գործերի գերատեսչությունների միջև:

Օգոստոսի 29-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ֆինլանդիայի ԱԳ նախարար Էլինա Վալտոնենի հետ:

Մարտի 27-ին Երևանում կայացել են Հայաստանի և Չեխիայի միջև քաղաքական խորհրդակցություններ՝ ԱԳ նախարարի տեղակալների մակարդակով:

Մայիսի 4-5-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այց է կատարել Չեխիա:

Սեպտեմբերի 18-22-ը Հայաստան է այցելել Չեխիայի պատգամավորների պալատի շրջակա միջավայրի հանձնաժողովի նախագահի պատվիրակությունը:

Հոկտեմբերի 9-10-ը ՀՀ ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանն այցելել է Չեխիա:

Դեկտեմբերի 13-14-ը Երևանում կայացել են Հայաստանի և Չեխիայի միջև քաղաքական խորհրդակցություններ՝ ԱԳ նախարարի տեղակալների մակարդակով:

Ապրիլի 2-5-ը Հայաստան է այցելել Լեհաստանի Սեյմի Լեհաստան-Հայաստան բարեկամության խմբի պատվիրակությունը:

Հունիսի 29-30-ը Երևանում կայացել է Հայ-լեհական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի յոթերորդ նիստը:

Հուլիսի 4-6-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի պաշտոնական այցը Լեհաստան:

Հունվարի 19-ին Երևանում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Կիպրոսի արտաքին գործերի նախարարությունների միջև:

Մայիսի 1-4-ը Կիպրոս է այցելել ՀՀ ԱԺ Հայաստան-Կիպրոս բարեկամության խմբի պատվիրակությունը:

Հոկտեմբերի 2-5-ը Հայաստան է այցելել Կիպրոսի խորհրդարանի Հայաստան-Կիպրոս բարեկամության խմբի պատվիրակությունը:

Փետրվարի 7-8-ը կայացել է Խորվաթիայի ԱԳ և Եվրոպական հարցերի նախարարի այցը Հայաստան:

Ապրիլի 3-5-ը կայացել է Խորվաթիա-Հայաստան բարեկամական խմբի պատվիրակության այցը Հայաստան:

Հուլիսի 7-8-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Խորվաթիայում մասնակցել է Դուբրովնիկի ֆորումի աշխատանքներին:

Հունվարի 16-ին կայացել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի աշխատանքային այցը Էստոնիա:

Սեպտեմբերի 28-ին Տալլինում կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Էստոնիայի ԱԳՆ-ների միջև նախարարի տեղակալների մակարդակով:

Նոյեմբերի 1-5-ը Հայաստան է այցելել Էստոնիայի խորհրդարանի Էստոնիա-Հայաստան բարեկամության խմբի պատվիրակությունը:

Դեկտեմբերի 13-ին Հայաստան է այցելել Էստոնիայի ԱԳ նախարարը:

Հունիսի 5-6-ը Ռիգայում կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Լատվիայի ԱԳՆ-ների միջև նախարարի տեղակալների մակարդակով:

Դեկտեմբերի 11-ին Բրյուսելում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել Լատվիայի ԱԳ նախարարի հետ:

Ապրիլի 19-20-ը կայացել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը պաշտոնական այցը Լիտվա:

Հոկտեմբերի 5-6-ը Հայաստան է այցելել Լիտվայի Սեյմասի փոխնախագահ Ռադվիլ Մորկունայտե-Միրկուլեհինենի գլխավորած պատվիրակությունը:

Հոկտեմբերի 18-20-ը Հայաստանում է գտնվել Լիտվայի վարչապետը:

Նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը Հայաստան է գտնվել Լիտվայի խորհրդարանի Լիտվա-Հայաստան բարեկամության խմբի պատվիրակությունը:

Դեկտեմբերի 11-ին Բրյուսելում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Լիտվայի ԱԳ նախարար Գաբրիելիուս Լանդսբերգիսի հետ:

Ապրիլի 3-6-ը կայացել է Սլովակիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի այցը Հայաստան, իսկ հունիսի 20-22-ը Սլովակիա է այցելել ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը:

Հոկտեմբերի 11-12-ը ՀՀ ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանն այցելել է Սլովակիա:

Դեկտեմբերի 11-ին Բրյուսելում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել Սլովակիայի ԱԳ նախարարի հետ:

Մայիսի 30-31-ը պաշտոնական այցով Հայաստանում է գտնվել Սլովենիայի ԱԺ նախագահ Ուրշկա Կլակոչար Զուպանչիչը:

Օգոստոսի 28-29-ը ՀՀ ԱԳ նախարարը Սլովենիայում մասնակցել է Բլեդի ռազմավարական ֆորումի աշխատանքներին:

Ապրիլի 3-4-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը պաշտոնական այցով գտնվել է Ռումինիայում:

Մայիսի 29-ին Ռումինիա է այցելել ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը:

Հոկտեմբերի 30-ին Բուխարեստում կայացել են Հայաստանի և Ռումինիայի ԱԳՆ-ների միջև քաղաքական խորհրդակցություններ՝ նախարարի տեղակալների մակարդակով:

Մայիսի 31–ից հունիսի 1-ը Հայաստան է այցելել Հունգարիայի փոխվարչապետը:
Հունիսի 18-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետություն աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը Բեռլինում հանդիպել է Հունգարիայի նախագահ Կատալին Նովակի հետ:

Հոկտեմբերի 27-ին աշխատանքային այցով Հայաստան է ժամանել Հունգարիայի ԱԳ նախարարը:

Ապրիլի 12-13-ը որպես ԵԱՀԿ նախագահող Հայաստան է այցելել Հյուսիսային Մակեդոնիայի ԱԳ նախարարը:

Հաշվետու տարում արձանագրելի են նաև միջազգային միջոցառումների շրջանակներում կայացած ներքոնշյալ երկկողմ հանդիպումները.

Փետրվարի 17-19-ը Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում Հայաստանի վարչապետը հանդիպումներ է ունեցել Լատվիայի նախագահի, ինչպես նաև Լիտվայի վարչապետի, Խորվաթիայի վարչապետի հետ:

Մայիսի 31-ից հունիսի 1-ը Քիշնևում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի երկրորդ գագաթնաժողովի շրջանակներում Հայաստանի

վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարճատև զրույց է ունեցել Նիդերլանդների վարչապետ Մարկ Ռուտեի, Շվեդիայի վարչապետ Ուլֆ Կրիստերսոնի հետ:

ՄԱԿ ԳԱ 78-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպումներ է ունեցել Նորվեգիայի, Ֆինլանդիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Սերբիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Ալբանիայի, Հունաստանի, Լիտվայի, Էստոնիայի, Լատվիայի ԱԳ նախարարների հետ:

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Սկոպյեում ԵԱՀԿ նախարարական 30-րդ համաժողովի շրջանակներում ԱԳ նախարարը հանդիպումներ է ունեցել Նիդերլանդների, Միացյալ Թագավորության, Շվեդիայի, Դանիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի, Չեռնոգորիայի ԱԳ նախարարների, Ֆրանսիայի ԱԳՆ Եվրոպայի հարցերով պետնախարարի հետ:

Հոկտեմբերի 4-5-ը իսպանական Գրանադա քաղաքում Եվրոպական քաղաքական համայնքի երրորդ գագաթնաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարճատև զրույցներ է ունեցել Նիդերլանդների վարչապետ Մարկ Ռուտեյի, Նորվեգիայի վարչապետ Յոնաս Գահր Ստորեյի, Ֆինլանդիայի վարչապետ Պետերի Օրպոյի և Իսլանդիայի վարչապետ Կատրին Յակոբսդոտտիրի հետ:

Դեկտեմբերի 1-2-ը COP28-ի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպումներ է ունեցել Սլովենիայի, Կիպրոսի և Սլովակիայի նախագահների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՀՆԴԿԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում շարունակվել է ակտիվ համագործակցություն ծավալվել Հայաստանի և Հնդկաստանի միջև:

Մարտի 2-5-ը «Ռաիսինա երկխոսություն» միջազգային համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Հնդկաստան, որտեղ կայացել է նրա հանդիպումը Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի հետ:

Ապրիլի 20-ին Երևանում կայացել են Հայաստանի, Իրանի և Հնդկաստանի ԱԳՆ-ների միջև եռակողմ ձևաչափով առաջին քաղաքական խորհրդակցությունները: Կողմերը պայմանավորվել են շարունակել եռակողմ ձևաչափը:

Հունիսի 11-13-ը ՀՀ ԲՏԱ նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը Հնդկաստանում մասնակցել է «Global Digital Public Infrastructure (DPI) Summit»-ին: Այցի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հնդկաստանի էլեկտրոնիկայի և

տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության միջև ստորագրվել է Թվային փոխակերպումների համար բնակչության մասշտաբով իրականացված հաջող թվային լուծումների փոխադարձ տրամադրման ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

Հունիսի 23-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հնդկաստանի Հանրապետության Կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը:

Հուլիսի 3-ին Երևանում կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի ԱԳՆ քաղաքական ծրագրավորման վարչության և Հնդկաստանի ԱԳՆ արտաքին քաղաքականության պլանավորման վարչության միջև:

Օգոստոսի 29-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը Հնդկաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում հանդիպել է Հնդկաստանի վարչապետի Ազգային անվտանգության գծով խորհրդական Աջիթ Դովալի հետ:

Սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի հետ:

Հոկտեմբերի 16-19-ը ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի գլխավորած պատվիրակությունը Մումբայում մասնակցել է Հնդկաստանի համաշխարհային ծովային 3-րդ գագաթաժողովին (GMIS 2023): Պատվիրակության կազմում էին նաև ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը:

Նոյեմբերի 16-ին Հայաստանի կողմից պաշտոնապես ստորագրել է Հնդկաստանի և Ֆրանսիայի կողմից համատեղ նախաձեռնված «Միջազգային արևային դաշինքի հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագիրը, բնօրինակը պաշտոնապես հանձնվեց Համաձայնագրի ավանդապահ պետություն հանդիսացող Հնդկաստանի դեսպանին:

Նոյեմբերի 18-ին Նյու Դելիում կայացան Հայաստանի և Հնդկաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական 10-րդ հերթական խորհրդակցությունները՝ Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի և Հնդկաստանի ԱԳ նախարարի Արևմտյան ուղղության հարցերով քարտուղար-տեղակալ Սանջայ Վերմայի գլխավորությամբ:

Հայաստանի «Ստարտափ Արմենիա» հիմնադրամի և Հնդկաստանի Անդհրա Պրադեշ նահանգում գործող աշխարհի ամենախոշոր բժշկական սարքավորումներ արտադրող «AMTZ» կենտրոնի կողմից փետրվարի 13-18-ը համատեղ անցկացված SSS Holidays India Vizag համաժողովի շրջանակներում

«AMTZ» կենտրոնում բացվել է «Ստարտափ Արմենիա» հիմնադրամի գրասենյակ:

Ապրիլ-մայիսին Հնդկաստանից Հայաստան են այցելել գործարարների 2 պատվիրակություն, կայացել են գործարար համաժողովներ. փոխըմբռնման հուշագրեր են կնքվել Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի ու Հնդկաստանի առևտրի պալատի և Հնդկաստանի Տնտեսական առևտրային կազմակերպության ու հայկական Club Capital բիզնես ակումբի միջև:

Ապրիլի 26-28-ը ՀՀ առողջապահության նախարարի՝ Հնդկաստան այցի շրջանակներում ստորագրվել են փոխգործակցության հուշագրեր Հայաստանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի և Հայաստանի Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի ու Հնդկաստանի բժշկական հաստատությունների Ապոլլո և ՄԵՏՐՈ բժշկական/հիվանդանոցային ցանցերի միջև:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՉԻՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստան-Չինաստան հարաբերություններում շարունակվել է արձանագրվել զարգացման դրական դինամիկա՝ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային և այլ ոլորտներում:

Հունիսի 2-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՉԺՀ առևտրի նախարարության միջև ստորագրվել է ՀՀ կառավարության և ՉԺՀ կառավարության միջև Հայաստանի հանրային հեռուստաընկերության նոր՝ 8-րդ տաղավարի կառուցման նախագծի իրականացման պայմանագիրը:

Հունիս 5-8-ը կայացել է առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի հերթական՝ 11-րդ նիստը՝ հանձնաժողովի հայկական կողմի նախագահ, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի մասնակցությամբ:

Հուլիսի 21-ին Պեկինում ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի և ՉԺՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մա Ճաոսյուի գլխավորած պատվիրակությունների միջև կայացել են Հայաստանի և Չինաստանի միջև հերթական քաղաքական խորհրդակցությունները:

Հուլիսի 31-ից օգոստոսի 4-ը ՀՀ ՏԿԵ նախարար, «Ծանսի-Նաիրիտ» ՀՁ տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ Գնել Սանոսյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է ՉԺՀ՝ Ծանսի նահանգի Դատոն քաղաքում կայանալիք «Ծանսի-Նաիրիտ» հայ-չինական համատեղ ձեռնարկության տնօրենների խորհրդի 6-րդ լիագումար նիստին և ՀՁ բոլոր բաժնետերերի ժողովին մասնակցելու նպատակով:

Հոկտեմբերին Չինաստանի կառավարությունը որոշում է կայացրել 1 մլն. ԱՄՆ դոլարի չափով ուղիղ աջակցություն տրամադրել ՀՀ կառավարությանը:

Հոկտեմբերի 17-18-ը Պեկինում կայացել է Միջազգային համագործակցությանն ուղղված 3-րդ «Գոտի և Ճանապարհ» համաժողովը, որին մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը:

Հոկտեմբերի 29-31-ը ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Չինաստան՝ Պեկինի 10-րդ Սյանշան ֆորումին մասնակցելու նպատակով:

Նոյեմբերի 5-10-ը Ծանհայ քաղաքում կայացել է Չինաստանի ներմուծման 6-րդ միջազգային ցուցահանդեսը, որին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանի գլխավորած պատվիրակությունը: Նշյալ ցուցահանդեսին Հայաստանը ներկայացված է եղել ազգային տաղավարով:

Նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 1-ը Չինաստան է այցելել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի գլխավորած պատվիրակությունը:

ՀԱՅԱՍՏԱՆ- ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջին Արևելքի երկրների հետ հարաբերություններում 2023թ. արձանագրվել են ևս մի շարք կարևոր իրադարձություններ, այդ թվում՝ առաջին անգամ Հայաստան է այցելել Իրաքի նախագահը, Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Սաուդյան Արաբիայի Թագավորության հետ, Կատարը ռեզիդենտ դեսպանություն է բացել Երևանում, Արաբական Միացյալ Էմիրությունների հետ փոխադարձաբար վերացվել է մուտքի արտոնագրերի պահանջը և այլն:

Փետրվարի 17-19-ը կայացած Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Իրաքի Հանրապետության վարչապետ Մուհամմադ Շիա Ալ-Սուդանիի և Իրաքյան Քուրդիստանի նախագահ Նեչիրվան Բարզանիի հետ:

Սեպտեմբերի 12-13-ը կայացել է Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի երրորդ նիստը:

Նոյեմբերի 21-23-ը պաշտոնական այցով Հայաստան է այցելել Իրաքի Հանրապետության նախագահ Աբդ Ալ-Լատիֆ Ռաշիդը: Իրաքի նախագահին ընդունել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: Իրաքի նախագահին այցելել է Հայոց ցեղասպանության

հուշահամալիր: Այցին զուգահեռ տեղի են ունեցել հայ-իրաքյան քաղաքական խորհրդակցություններ՝ երկու երկրների ԱԳ նախարարների տեղակալների ղեկավարությամբ:

Փետրվարի 23-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն այցելել է Դամասկոս, որտեղ հանդիպումներ է ունեցել Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ-Ասադի, ինչպես նաև ԱԳ և սփյուռքի նախարար Ֆեյսալ Միկդադի հետ: Արարատ Միրզոյանն այցելել է նաև երկրաշարժից տուժած Հալեպ և հանդիպում է ունեցել Հալեպի նահանգապետ Հուսեյն Դիյաբի հետ:

Նոյեմբերի 13-14-ը Սիրիա կատարած այցի ընթացքում կայացել են ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակության հանդիպումները Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի, Ժողովրդական ժողովի նախագահ Համմուդահ Սաբբաղի, արտաքին գործերի և սփյուռքի նախարար Ֆեյսալ Ալ-Միկդադի, ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Սիրիայում աշխատանքներն է շարունակել Հայաստանի հումանիտար առաքելությունը, որի կողմից ականազերծվել է 2.4 մլն քմ տարածք, ցուցաբերվել բժշկական օգնություն 60.000 տեղաբնակների:

Մարտի 7-8-ը Կահիրե աշխատանքային այցի ընթացքում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Հորդանանի փոխվարչապետ, Արտաքին գործերի և սփյուռքի նախարար Այման ալ Սաֆադիի հետ:

Դուբայում անցկացվող ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 28-րդ համաժողովի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը դեկտեմբերի 1-ին հանդիպում է ունեցել Հորդանանի թագավոր Աբդալլահ 2-րդի հետ:

Մարտի 7-8-ը Կահիրե աշխատանքային այցի ընթացքում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Լիբանանի արտաքին գործերի և էմիգրանտների նախարար Աբդալլահ Բու Հաբիբի հետ:

Գազայում իրավիճակի հետ կապված հոկտեմբերի 16-ին ՀՀ կառավարության կողմից կազմակերպվել է Թել Ավիվ-Երևան հատուկ չվերթ՝ ապահովելով ՀՀ քաղաքացիների և նրանց ընտանիքի անդամների կամավոր տեղափոխումը Հայաստան:

Մայիսին Ամմանում կայացել է Հայաստան-Հորդանան-Պաղեստին ԱԳ նախարարությունների ներկայացուցիչների եռակողմ ձևաչափով հանդիպում՝ Երուսաղեմի սրբավայրերի ստատուս քվոյի պահպանման հարցերի վերաբերյալ:

Մարտի 7-8-ը Կահիրե աշխատանքային այցի ընթացքում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Արաբական Միացյալ

Էմիրություններ արտաքին գործերի նախարար Աբդալլահ բին Զայեդ Ալ Նահյանի հետ:

Առաջին կիսամյակում ԱՄԷ են այցելել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի (փետրվարի 18-ին՝ «ԱՅԴԵՔՍ ԵՎ ՆԱՎԴԵՔՍ-2023» ռազմարդյունաբերական ցուցահանդեսին մասնակցելու նպատակով), բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանի (փետրվարի 18-ին՝ մասնակցելու «IDEX 2023» ռազմարդյունաբերական ցուցահանդեսին), էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի (մայիսի 7-10-ը՝ մասնակցելու «AIM 2023» ամենամյա ներդրումային համաժողովին) գլխավորած պատվիրակությունները:

Սեպտեմբերի 6-8-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը պաշտոնական այցելություն է կատարել Արաբական Միացյալ Էմիրություններ: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ԱՄԷ նախագահ Մուհամմադ Բին Զայեդ Ալ Նահյանի, արտաքին գործերի նախարար Աբդալլահ բին Զայեդ Ալ Նահյանի, Դաշնային ժողովի նախագահ Սաքր Ղոբաշիի, համակեցության և հանդուրժողականության հարցերով նախարար շեյխ Նահյան բին Մուբարաք ալ Նահյանի հետ: Այցի շրջանակներում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրությունը, որով չեղարկվում է ՀՀ սովորական անձնագրեր կրող քաղաքացիների համար ԱՄԷ մուտքի արտոնագիր ստանալու պահանջը:

Սեպտեմբերի 18-ին Երևանում անցկացվել է Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ գործարար համաժողովը: Համաժողովի շրջանակներում ստորագրվել են փոխըմբռնման 3 հուշագիր:

Նոյեմբերի 8-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԱՄԷ արտաքին գործերի նախարարության առևտրի և տնտեսական հարցերով պետնախարար Ահմեդ Ալի Մուհամեդ Ալսայեղին:

Նոյեմբերի 12-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այց է կատարել Արաբական Միացյալ Էմիրություններ, որի ընթացքում հանդիպել է ԱՄԷ պաշտպանության պետնախարար Մոհամմադ Ահմադ ալ Բովարդիի հետ:Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ ԲՏԱ նախարարը: Երկու նախարարները նաև մասնակցել են Դուբայի ավիացիոն ցուցահանդեսի (Dubai Airshow) բացման արարողությանը:

Հունվարին աշխատանքային այցով Կատարում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը և պատվիրակության անդամ ՀՀ առողջապահության նախարար

Անահիտ Ավանեսյանը հանդիպել են Կատարի Զարգացման հիմնադրամի գլխավոր տնօրեն Խալիֆա բին Ջասեմ ալ-Քուարին: ՀՀ ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակությանն ընդունել է Մաջլիս ալ-Շուրայի նախագահ Հասսան բին Աբդուլլա ալ-Ղանիմին: ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև Կատարի ներդրումային գործակալության տնօրեն Մանսուր Իբրահիմ Ալ-Մահմուդին:

Մարտի 15-19-ը Դոհայում տեղի է ունեցել «AgriteQ» միջազգային ամենամյա գյուղատնտեսական ցուցահանդեսը, որին մասնակցել են և իրենց գյուղատնտեսական արտադրանքն են ներկայացրել տասնյակից ավելի ՀՀ գյուղատնտեսական ընկերություններ:

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը մայիսի 23-25-ը աշխատանքային այց է կատարել Կատար՝ «Համաշխարհային աճի նոր պատմությունը» խորագիրը կրող Կատարի երրորդ տնտեսական համաժողովին մասնակցելու նպատակով: Վահագն Խաչատուրյանն այցի ընթացքում հանդիպել է Կատարի Պետության էմիր շեյխ Թամիմ բին Համադ Ալ Թանիի հետ:

Դեկտեմբերի 10-ին Կատարի Պետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը հանդիպել է Էմիրի դիվանի ղեկավար Շեյխ Սաուդ Բին Աբդուլրահման Ալ Թանիի հետ:

Նոյեմբերին Կատարը ռեզիդենտ դեսպանություն է բացել Երևանում:

Նոյեմբերին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Մանամա՝ մասնակցելու IISS Manama Dialogue 19-րդ տարածաշրջանային անվտանգության համաժողովին: Մանամայում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է Բահրեյնի Թագավորության ԱԳ նախարար Աբդ Ալ-Լատիֆ բին Ռաշիդ Ալ-Զայանիի հետ:

Հոկտեմբերի 2-ին Մասկատում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի Հանրապետության և Օմանի Սուլթանության արտաքին գործերի նախարարությունների միջև՝ ԱԳ նախարարների տեղակալների ղեկավարությամբ:

Նոյեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության և Սաուդյան Արաբիայի Թագավորության միջև ստորագրվել է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրություն:

Հունվարի 28-29-ը տեղի է ունեցել Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Աբդել Ֆաթթահ Ալ-Սիսիի պաշտոնական այցը Հայաստան, որի ընթացքում վերջինիս հետ հանդիպումներ են ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ

Փաշինյանը և ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: Այցի ընթացքում երկու երկրների նախագահների ներկայությամբ ստորագրվել են փոխըմբռնման 3 հուշագիր: Այցի շրջանակներում տեղի է ունեցել նաև ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը ԵԱՀ ԱԳ նախարար Սամեհ Շուքրիի հետ:

Փետրվարի 27-ին Կահիրեում կայացել է հայկական և եգիպտական զբոսաշրջային ընկերությունների միջև առաջին գործարար համաժողովը:

Մարտի 7-8-ը ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղարի հրավերով աշխատանքային այց է կատարել Կահիրե և ելույթ ունեցել Արաբական պետությունների լիգայի խորհրդի՝ նախարարական մակարդակով 159-րդ նիստին: Այցի շրջանակներում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԱՊԼ գլխավոր քարտուղար Ահմեդ Աբուլ Ղեյթի հետ: ԱՊԼ գլխավոր քարտուղարի հետ ևս մեկ հանդիպում կայացել է նոյեմբերի 18-ին Մանամայում:

Նոյեմբերի 18-ին Մանամայում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Ծոցի համագործակցության խորհրդի գլխավոր քարտուղար Ջասեմ Մուհամմադ Ալ-Բուդայվիի հետ:

Դուբայում կայացած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնֆերանսի շրջանակներում Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը դեկտեմբերի 2-ին հանդիպում է ունեցել Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթահ Էլ-Սիսիի հետ:

Կահիրեում դեկտեմբերի 4-ին մեկնարկած «ԷԴԵՔՍ-2023» պաշտպանական և անվտանգային տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսին հայկական 12 ընկերություններ «Հայաստան» միասնական տաղավարի ներքո ներկայացրել են պաշտպանական և անվտանգային ոլորտներում ընկերությունների առաջարկած լուծումներն ու արտադրանքը:

Դեկտեմբերի 5-6-ը Թունիսում տեղի են ունեցել Հայաստանի և Թունիսի միջև առաջին քաղաքական խորհրդակցությունները՝ ԱԳ նախարարների տեղակալների գլխավորությամբ: Այցի ընթացքում ստորագրվել են Հայաստանի և Թունիսի ԱԳՆ-ների միջև քաղաքական խորհրդակցությունների մասին հուշագիրը, ինչպես նաև դիվանագիտական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին համաձայնագիրը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետությունը ակտիվ համագործակցություն է ծավալվել նաև **եվրասիական տարածաշրջանի երկրների** հետ:

Նոյեմբերի 14-ին կայացել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հեռախոսազրույցը, իսկ նոյեմբերի 21-ին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի հեռախոսազրույցը Բելառուսի արտաքին գործերի նախարարի հետ:

Հունիսի 6-ին Մինսկում կայացել է ՀՀ Ազգային ժողովի և ԲՀ Ազգային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 13-րդ նիստը:

Մարտի 20-ին կայացել է ԲՀ փոխվարչապետի այցը Հայաստան:

Հոկտեմբերի 5-ին Գրանադայում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և Ուկրաինայի նախագահի հանդիպումը:

Սեպտեմբերի 29-ին Դուբլինում կայացել է ՀՀ ԱԺ նախագահի և Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահի հանդիպումը:

Դեկտեմբերի 11-ին Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը Ուկրաինայի արտաքին գործերի նախարարի հետ:

Աշխատանքներ են տարվել Հայաստանի և Մոլդովայի միջև երկկողմ հարաբերությունները աշխուժացնելու, մասնավորապես հայ-մոլդովական առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը, ինչպես նաև երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև քաղաքական խորհրդատվություններ անցկացնելու ուղղությամբ:

Դեկտեմբերի 8-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետի հեռախոսազրույցը Ղազախստանի Հանրապետության նախագահի հետ:

Ապրիլի 28-ին Երևանում կայացել է Տնտեսական համագործակցության հայ-ղազախստանյան միջկառավարական հանձնաժողովի 9-րդ նիստը:

Ապրիլին ստորագրվել է մշակույթի ոլորտում երկկողմ համագործակցության 2023-2025թթ. ծրագիրը:

Նոյեմբերի 15-ին Բիշքեկում կայացել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ղրղզական Հանրապետության ժոգորկու Քենեշի «Հայաստան-Ղրղզստան» խորհրդարանական բարեկամության խմբի հերթական նիստը:

Հուլիսի 12-ին կայացել է Հայաստանի վարչապետի և Ուզբեկստանի նախագահի հեռախոսազրույցը:

Օգոստոսի 3-ին կայացել է ՀՀ ԱԳ և ՈւՀ ԱԳ նախարարների տեղակալների հանդիպումը:

Օգոստոսի 4-ին Տաշքենդում կայացել է Տնտեսական համագործակցության հայ-ուզբեկական միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը, ինչին նախորդել է գործարար համաժողովի անցկացումը:

Մայիսի 31-ին ստորագրվել է Հայաստանի և Թուրքմենստանի միջև մշակույթի բնագավառում 2023-2025թթ. համագործակցության ծրագիրը:

Մայիսին անցկացվել են Թուրքմենստանի մշակույթի օրերը Երևանում:

Աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարության և Տաջիկստանի Հանրապետության ԱԳ նախարարության միջև երկկողմ քաղաքական խորհրդատվություններ անցկացնելու ուղղությամբ:

2023թ. ակտիվորեն ընթացել են նաև **Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների** հետ համագործակցության հետագա զարգացման ուղղությամբ աշխատանքները:

Շարունակվել են Հայաստան-Ճապոնիա հարաբերությունների խորացմանն ուղղված աշխատանքները և առկա դրական դինամիկան:

Հունվարի 31-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ճապոնիայի ԱԳ նախարար Յոշիմասա Հայաշիի հետ, որի ընթացքում զրուցակիցներն անդրադարձ են կատարել տարածաշրջանային անվտանգությանը ու կայունությանը վերաբերող հարցերին:

Մայիսի 1-3-ը աշխատանքային այցով Հայաստան է ժամանել Ճապոնիայի ԱԳ խորհրդարանական փոխնախարար Յումի Յոշիկավայի գլխավորած պատվիրակությունը:

Հունիսի 30-ին կայացել է հայ-ճապոնական գործարար առցանց համաժողով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի, Ճապոնիայում ՀՀ դեսպանության, ինչպես նաև «ROTOBO» ասոցիացիայի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հոկտեմբերի 3-ին Երևանում կայացել են Հայաստանի և Ճապոնիայի ԱԳՆ-ների միջև հերթական քաղաքական խորհրդակցությունները: Հայկական կողմը ներկայացրել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը,

ճապոնականը՝ ԱԳ նախարարի փոխօգնական, Եվրոպական հարցերի բյուրոյի գլխավոր տնօրենի տեղակալ Մասակի Իկեգամին:

Հոկտեմբերի 6-ին Ճապոնիայի կառավարությունը որոշում է կայացրել 2 մլն. ԱՄՆ դոլարի չափով անհետաձգելի օգնության դրամաշնորհ տրամադրել Հայաստանին՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարիքների համար:

Հոկտեմբերի 23-27-ը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը Ճապոնիայում մասնակցել է «Japan IT Week» միջոցառմանը, ինչպես նաև հանդիպումներ ունեցել Ճապոնիայի Թվային փոխակերպման նախարար, նախկին ԱԳ նախարար Տարո Կոնոյի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և Ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության (JETRO) ղեկավարության հետ:

Շարունակվել են համատեղ աշխատանքները 2025թ. Ճապոնիայի Օսակա քաղաքում կայանալիք «World Expo» ցուցահանդեսին ՀՀ մասնակցության նախապատրաստման ուղղությամբ: Նոյեմբերի 12-15-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ Ճապոնիա կատարած այցի շրջանակներում ճապոնական «MASH» ընկերության հետ ստորագրվել է ՀՀ տաղավարի կառուցման պայմանագիրը:

Հայաստանի Հանրապետության և Կորեայի Հանրապետության միջև հարաբերություններում նկատվել է զգալի դրական դինամիկա, ինչը դրսևորվել է խորհրդարանական բարեկամական խմբերի փոխայցելություններով, ոչ ռեզիդենտ դեսպանների փոխադարձ հավատարմագրմամբ, ԿՀ նախագահի 3 հատուկ բանագնացների այցերով ՀՀ, միջազգային հարթակներում երկու երկրների ԱԳ նախարարների միջև կայացած 2 հանդիպումներով:

Նոյեմբերի 28-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը ԿՀ նախագահ Յուն Սոկ Յոլի հետ:

Արդյունավետ քննարկումներ են կայացել սեպտեմբերի 5-ին ԿՀ նախագահի հատուկ բանագնաց, Կորեայի առևտրի և արդյունաբերության պալատի (KCCI) նախագահ, Կորեայի խոշորագույն կոնգլոմերատ «SK Group»-ի սեփականատեր Չեյ Տե-վոնի գլխավորած պատվիրակության, ինչպես նաև հոկտեմբերի 24-ին Կորեայի Հանրապետության նախագահի մեկ այլ հատուկ բանագնաց, ԿՀ առևտրի, արդյունաբերության և էներգետիկայի նախարարությունում առևտրի նախարար Ան Դոկգունի գլխավորած պատվիրակության ՀՀ կատարած այցերի շրջանակներում:

Դրական խթան է հանդիսացել նաև սեպտեմբերի 14-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Կորեայի առևտրային ներդրումների խթանման

գործակալության (KOTRA) կողմից Երևանում անցկացված հայ-կորեական տնտեսական համագործակցության համաժողովը:

Նոյեմբերի 15-ին կորեական կողմը հայտարարել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հումանիտար կարիքների բավարարման նպատակով 500 հազ. ԱՄՆ դոլարի չափով օգնության տրամադրման մասին, որը փոխանցվել է Հայկական Կարմիր Խաչի գրասենյակին:

Դեկտեմբերի 14-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Նեպալի ԱԳ նախարար Նարայան Պրակաշ Սաուդի հետ, ով Հայաստան էր ժամանել Երևանում անցկացվող Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների նախարարական հանդիպմանը մասնակցելու նպատակով:

Օգոստոսին ՀՀ Ազգային ժողովը դարձել է ԱՍԵԱՆ-ի (ASEAN) միջխորհրդարանական վեհաժողովի (AIPA) դիտորդ:

Նոյեմբերի 14-ին ՀՀ «Արմենպրես» պետական լրատվական գործակալության և Վիետնամի լրատվական գործակալության (Vietnam News Agency՝ VNA) միջև առցանց ձևաչափով ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:

Դեկտեմբերի 8-ին Վիետնամի Հոշիմին քաղաքում կայացել է ՀՀ պատվավոր հյուպատոսության պաշտոնական բացումը:

Տարվա ընթացքում Հայաստանի և Ինդոնեզիայի միջև դյուրացվել է մուտքի ռեժիմը, որի արդյունքում երկու երկրների քաղաքացիները կարող են միմյանց երկրներ մուտք գործել սահմանային անցակետերում կամ էլեկտրոնային եղանակով վիզա ստանալու արդյունքում:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները **Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրների** հետ հարաբերությունները զարգացնելու և խորացնելու ուղղությամբ:

Կանադայի հետ հարաբերություններում արձանագրվել է որակական նոր փուլ, շարունակվել են աշխատանքները Կանադայի վարչապետի հատուկ բանագնաց Ստեֆան Դիոնի՝ «Աջակցելով Հայաստանի ժողովրդավարությանը» զեկույցով առաջարկվող քայլերի իրականացման ուղղությամբ:

Սեպտեմբերի 27-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիի հետ:

Հոկտեմբերի 25-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիի հետ: Այցի ընթացքում Կանադայի ԱԳ նախարարին ընդունել է ՀՀ վարչապետը: Այցի շրջանակներում կայացել է Երևանում

Կանադայի ռեզիդենտ դեսպանության պաշտոնական բացման արարողությունը:

Նոյեմբերի 20-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Կանադայի խորհրդարանական պատվիրակությանը՝ սենատոր Լեո Հուսակոսի գլխավորությամբ:

Հունվարի 17-24-ը Հայաստան է այցելել Մեքսիկայի Պատգամավորների պալատի Մեքսիկա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Բերենիսե Խուարես Նավառետեի գլխավորած պատվիրակությունը:

Սեպտեմբերի 12-16-ը ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը աշխատանքային այցով գտնվել է Մեքսիկայում: Այցի շրջանակներում կայացել է Հայաստանի և Մեքսիկայի արտաքին գերատեսչությունների միջև քաղաքական խորհրդակցությունների հերթական փուլը: Այցի ընթացքում ստորագրվել է 2023-2026թթ. համար մշակութային համագործակցության մասին գործնական ծրագիրը և դիվանագիտական դպրոցների միջև համագործակցության հաստատման մասին համաձայնագիրը:

Շարունակվել է **Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների** հետ ակտիվ քաղաքական բազմաբնույթ երկխոսության զարգացումը:

Մարտի 20-30-ը կայացել է ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանի տարածաշրջանային այցը Արգենտինա, Բրազիլի և Էկվադոր:

Մարտի 30-ից ապրիլի 9-ը մասնավոր այցով Հայաստանում էին գտնվում Մեքսիկայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նախաձեռնած և այս գործում ավանդ ունեցող սենատորներ Ալեխանդրա դել Կարմեն Լեոն Գաստելումը և Ինդիրա Կեմպիս Մարտինեսը:

Մարտի 31-ին տեղի է ունեցել Երևանում Դոմինիկյան Հանրապետության դիվանագիտական գրասենյակի պաշտոնական բացումը:

Մայիսի 28-ից հունիսի 2-ը Հայաստան է այցելել Արգենտինայի Սենատի և Պատգամավորների պալատի անդամներից բաղկացած խորհրդարանական պատվիրակությունը՝ Հայաստան-Արգենտինա բարեկամական խմբի նախագահ Գիժերմո Անդրադայի գլխավորությամբ:

Օգոստոսի 16-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Բրազիլի արտաքին գործերի նախարար Մաուրո Վիեյռայի հետ:

Դեկտեմբերի 9-15-ը Նախագահ Վահագն Խաչատուրյանը աշխատանքային այցով գտնվել է Արգենտինայում և Ուրուգվայում: Այցի շրջանակներում Նախագահը մասնակցել է նորընտիր նախագահ Խավիեր Միլեյի երդմնակալության արարողությանը, հանդիպումներ է ունեցել Արգենտինայի և Ուրուգվայի բարձրագույն ղեկավարության ու հայկական համայնքի ներկայացուցիչների հետ:

Աֆրիկայի երկրների հետ հարաբերություններում 2023թ. արձանագրվել են կարևոր ձեռքբերումներ, այդ թվում՝ առաջին անգամ Հայաստան են այցելել Եգիպտոսի նախագահը, Արաբական պետությունների լիգայի նախարարական համաժողովում առաջին անգամ ելույթ է ունեցել ՀՀ ԱԳ նախարարը, Բոցվանայի հետ հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ և այլն:

Դեկտեմբերի 14-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Բոցվանայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Լեմոգանգ Կվապեի հետ, ով Երևանում մասնակցում էր Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների նախարարական հանդիպմանը: Հանդիպման շրջանակներում Հայաստանի և Բոցվանայի ԱԳ նախարարները ստորագրել են երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համատեղ հայտարարություն:

Տարվա ընթացքում Նիգերիան և Զիմբաբվեն նոր դեսպաններ են հավատարմագրել Հայաստանում:

Դեկտեմբերին Հայաստանն առաջին անգամ դեսպան է հավատարմագրել Եթովպիայում:

ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ԵԱՏՄ շրջանակներում կայացել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2, Եվրասիական միջկառավարական խորհրդի 3 հերթական և 1 արտահերթ նիստեր, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 13 նիստեր:

Մշակվել և ընդունվել են մի շարք կարևոր փաստաթղթեր, մասնավորապես՝

Մայիսի 25-ին Մոսկվայում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին ընդունվել է ԵԱՏՄ մասին պայմանագրի փոփոխությունների փաթեթը: Ծրագրերի ընտրության և ֆինանսավորման կարգը հաստատվել է հոկտեմբերի 26-ին Բիշքեկում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի ընթացքում:

Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ փետրվարի 2-3-ը Ալմաթի քաղաքում կայացած նիստին քննարկվել և հաստատվել են ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի շրջանակներում էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական փոխանցման ծառայությունների հասանելիության կանոնները: Փաթեթի երկրորդ մասը հաստատվել է հոկտեմբերի 26-ին, Բիշքեկում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի ընթացքում:

Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ հունիսի 7-8-ը Սոչիում կայացած նիստի ընթացքում ստորագրվել է ԵԱՏՄ պետություններում գիտական աստիճանների մասին փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին համաձայնագիրը:

Օգոստոսի 24-25-ը Ծաղկաձորում հրավիրվել է Եվրասիական միջկառավարական խորհրդի արտահերթ նիստ: Քննարկվել են ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման հիմնական խնդիրներն ու առանցքային ուղղությունները: Քննարկումների արդյունքների հիման վրա մշակվել և համաձայնեցվել է Մինչև 2030 և 2045թթ. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման մասին հռչակագրի նախագիծը, որը ստորագրվել է անդամ պետությունների ղեկավարների կողմից Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում կայացած նիստին:

ԵԱՏՄ և Իրանի միջև ազատ առևտրի մասին համաձայնագիրը ստորագրվել է դեկտեմբերի 25-ին Սանկտ-Պետերբուրգում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի ընթացքում:

Փետրվարի 15-ին Եվրասիական տնտեսական խորհուրդը հաստատել է ԱՄԷ հետ բանակցային դիրեկտիվները, մարտի 6-8-ը Դուբայում կայացել է բանակցությունների առաջին փուլը, հունիսի 20-22-ը՝ երկրորդ փուլը:

Ապրիլի 3-5-ը Ջակարտայում մեկնարկել են Ինդոնեզիայի հետ բանակցությունները: Բանակցությունների երկրորդ փուլը տեղի է ունեցել հուլիսի 24-26-ը Մոսկվայում, երրորդ փուլը՝ դեկտեմբերի 13-15-ը Ինդոնեզիայում:

Օգոստոսին Մոսկվայում կայացել է ԵԱՏՄ և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների 6-րդ փուլը:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները նաև ԵԱՏՄ և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման՝ ԵԱՏՀ ծրագրի (ճանապարհային քարտեզի) համաձայնեցման շուրջ:

Հոկտեմբերի 20-ին Հանոյում կայացել է ԵԱՏՄ ու նրա անդամ պետությունների և Վիետնամի միջև Ազատ առևտրի համաձայնագրով ստեղծված համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստը:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մարտի 17-ին ՀԱՊԿ ԳՔ կարգավիճակում առաջին անգամ այցով Հայաստանում գտնվող ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի, ՀՀ ԱԳ նախարարի, պաշտպանության նախարարի և ԱԽ քարտուղարի հետ:

Հունիսի 8-ին Մինսկում անցկացվել է ՀԱՊԿ անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի նիստը՝ ՀՀ ԱԽ քարտուղարի մասնակցությամբ:

Հունիս 20-ին Մինսկում կայացել է ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի նիստը՝ ՀՀ ԱԳ նախարարի մասնակցությամբ: ՀՀ ԱԳ նախարարը մասնավորապես իր ելույթում անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում և Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված լարված իրավիճակին, այդ թվում՝ ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտում Ադրբեջանի սադրանքներին, հունիսի 15-ին Հակարի կամրջի մոտ տեղի ունեցած միջադեպին, ինչպես նաև Լաչինի միջանցքի՝ վեց ամսից ավել շարունակվող ապօրինի արգելափակման հետևանքով ստեղծված մարդասիրական խնդիրներին և Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների իրականացման խորացող վտանգին: Այս համատեքստում նախարար Միրզոյանը շեշտել է ՀԱՊԿ հասցեական արձագանքի հրամայականը:

Բելառուսական կողմի նախաձեռնությամբ՝ նոյեմբերի 14-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետի հեռախոսազրույցը Բելառուսի նախագահ, ՀԱՊԿ ՀԱԽ նախագահի հետ, իսկ նոյեմբերի 21-ին՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հեռախոսազրույցը Բելառուսի արտաքին գործերի նախարար, ՀԱՊԿ ԱԳՆԽ նախագահի հետ: Հեռախոսազրույցների ընթացքում մտքեր են փոխանակվել երկկողմ օրակարգի շուրջ:

Դեկտեմբերի 21-ին ՀՀ ԱԳ նախարարն ընդունել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ի. Տասմագամբետովին: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը, ի թիվս այլ հարցերի, ՀՀ ԱԳ նախարարին տեղեկացրել է նոյեմբերին Մինսկում կայացած ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանի և ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի, պաշտպանության նախարարների խորհրդի

և անվտանգության խորհրդի քարտուղարների կոմիտեի համատեղ նիստի արդյունքների մասին:

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1 նիստ (հոկտեմբերի 13, Բիշքեկ) և ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1 ոչ պաշտոնական հանդիպում (դեկտեմբերի 26, Սանկտ Պետերբուրգ), ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի 3 նիստ (հունիսի 8, Սոչի; հոկտեմբերի 27, Բիշքեկ; դեկտեմբերի 18, Մոսկվա), ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի 2 նիստ (ապրիլի 14, Սամարղանդ և հոկտեմբերի 12, Բիշքեկ), ինչպես նաև ԱՊՀ տնտեսական խորհրդի 4 նիստ: Բացի այդ, ԱՊՀ Տնտեսական խորհրդին կից Տնտեսական հարցերով հանձնաժողովը տարվա ընթացքում անցկացրել է 12 նիստ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի՝ հունիսի 8-ին կայացած նիստի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքվել են մի շարք համաձայնագրեր, այդ թվում՝ «ԱՊՀ մասնակից պետությունների՝ ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագիր, Հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի գնահատման Միջազգային կենտրոն ստեղծելու մասին համաձայնագիրը և այլն:

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ԱԳ նախարարությունը շարունակել է ՄԱԿ շրջանակներում բարձրաձայնել Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամի խնդիրը:

Հունվարի 16-ին ՀՀ ԱԳ նախարարը հեռախոսազրույց է ունեցել ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հետ՝ ընդգծելով Լաչինի միջանցք և Լեռնային Ղարաբաղ ՄԱԿ միջգործակալական առաքելության գործուղման, ինչպես նաև՝ ՄԱԿ գործակալությունների՝ Լեռնային Ղարաբաղ անվտանգ և անխոչընդոտ հումանիտար մուտքի անհրաժեշտությունը:

Հունվարի 16-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Վիեննայում ՄԱԿ գրասենյակի Գլխավոր քարտուղար, ՄԱԿ Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) Գործադիր տնօրեն Ղադա Ֆաթի Վալիի հետ: Հանդիպմանը ԱԳ նախարարն անդրադարձել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, դատաիրավական և ոստիկանության ոլորտներում:

Աշխատանքներ են տարվել Լաչինի միջանցքի շրջափակման հարցում ՄԱԿ մարմինների, ինչպես նաև ՄԱԿ ԱԽ անդամ երկրների ներգրավվածության ապահովման ուղղությամբ: Մայիսի 22-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը ելույթ է ունեցել «Զինված հակամարտություններում քաղաքացիական անձանց պաշտպանությունը» թեմայով ԱԽ բաց քննարկմանը:

Մայիսի 24-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը Նյու Յորքում հանդիպում է ունեցել Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդական, ԳՔ տեղակալ Ալիս Վահրիմու Նդերիտուի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) նախագահ Միրյանա Սպոլյարիչ Էգերի հետ:

Հուլիսի 26-ին ՀՀ ԱԳ նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ՝ Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար իրավիճակի վերաբերյալ:

Հուլիսի 28-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչները այցելել են Հակարիի կամրջի շրջակայք, որտեղ նրանց մանրամասն ներկայացվել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետևանքով ստեղծված հումանիտար ճգնաժամը և այն հասցեագրելու նպատակով Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամի աշխատանքային խմբի որոշմամբ ԼՂ ուղարկված պարենային և բժշկական հրատապ հումանիտար աջակցության բեռների շուրջ ստեղծված իրավիճակը:

Օգոստոսի 16-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի հրատապ նիստին, որը հրավիրվել էր Հայաստանի դիմումի հիման վրա՝ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակման և Լեռնային Ղարաբաղի լիակատար շրջափակման հետևանքով ԼՂ-ում հումանիտար իրավիճակի վատթարացման առնչությամբ:

Սեպտեմբերի 19-ին ՀՀ ԱԳ նախարարությունում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի տեղակալներ Վահան Կոստանյանի և Պարույր Հովհանիսյանի հանդիպումը ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված հերթական լայնածավալ ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

Սեպտեմբերի 21-ին տեղի է ունեցել ՀՀ դիմումի համաձայն հրավիրված ՄԱԿ ԱԽ հրատապ հանդիպումը ՀՀ ԱԳ նախարարի մասնակցությամբ՝ քննարկելու Ադրբեջանի կողմից սանձազերված ռազմական հարձակման արդյունքում ստեղծված իրավիճակը: ՀՀ ԱԳ նախարարի գլխավորությամբ ՀՀ պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին, որի շրջանակներում ԱԳ նախարարը մասնակցել է մի շարք բարձր մակարդակի միջոցառումների, այդ թվում ԳԱ 78-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածի առանցքային միջոցառմանը՝ Կայուն զարգացման նպատակների գագաթնաժողովին: Կազմակերպվել են մի շարք երկկողմ հանդիպումներ, որոնց ընթացքում ՀՀ ԱԳ նախարարը և ԱԳ նախարարի տեղակալը ներկայացրել են ԼՂ-ում ստեղծված իրավիճակը:

Հոկտեմբերի 2-ին ՀՀ ԱԳ նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ: Հանդիպումը համակարգել է ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, մասնակցել և խոսքով հանդես են եկել ՀՀ փոխվարչապետեր Տիգրան Խաչատրյանը և Մհեր Գրիգորյանը:

Նոյեմբերի 17-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը հանդիպում է ունեցել Հայաստանում այցով գտնվող ՄԱԿ Քաղաքական և խաղաղաշինության հարցերով դեպարտամենտի Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Ամերիկաների հարցերով Գլխավոր քարտուղարի փոխտեղակալ Միրոսլավ Յենչայի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանը ստորագրել է Հնդկաստանում ՄԱԿ-ի հետ փոխկապակցված Տիեզերական գիտության և տեխնոլոգիական կրթության տարածաշրջանային կենտրոնին (The Centre for Space Science and Technology Education in Asia Pacific) (CSSTEAP) ՀՀ միանալու մասին համաձայնագիրը:

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՅՈՒՆԵՍԿՕ)

Շարունակվել է ակտիվ երկխոսությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ: Հատուկ ուշադրության կենտրոնում է եղել ԼՂ-ում Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, պղծման և ինքնության աղավաղման հարցը և ԼՂ և շրջակա տարածքներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեխնիկական առաքելության իրականացման անհրաժեշտությունը:

Հոկտեմբերի 8-11-ը ՀՀ է այցելել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրատապ փաստահավաք առաքելությունը՝ հասցեագրելու 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական

հարձակման հետևանքով ԼՂ-ից բռնի տեղահանված և ՀՀ ժամանած փախստականների կրթության ոլորտի կարիքները:

Դեկտեմբերին հաստատվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնակցության ծրագրի (Participation Programme) շրջանակներում հրատապ աջակցության համար ներկայացված ծրագիրը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված փախստական երեխաներին կրթության գործընթացում ներառելուն և նրանց բարոյահոգեբանական վիճակը բարելավելուն:

Նոյեմբերի 9-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 42-րդ նստաշրջանին, ինչպես նաև հանդիպել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեին: Նստաշրջանին իր ելույթում ՀՀ ԱԳ նախարարը անդրադարձել է ԼՂ-ում մնացած մշակութային և կրոնական ժառանգության նկատմամբ վանդալիզմի և թալանի ռիսկերին՝ նշելով, որ 2020թ. աշնանից ՀՀ-ն ահազանգել է միջազգային հանրությանը ԼՂ-ում և շրջակայքում հսկայական կրոնական և մշակութային ժառանգության ոչնչացման, պղծման և յուրացման՝ Ադրբեջանի պետական քաղաքականության մասին ու կարևորելով ԼՂ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելության գործուղումը:

Մայիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի որոշմամբ Կոմիտասի ստեղծագործությունների ժողովածուն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» միջազգային ռեգիստրում:

Հունիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում Հայաստանը կազմակերպել է Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված գիտաժողով, ցուցահանդես և համերգ:

Նոյեմբերի 7-22-ը Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 42-րդ նստաշրջանի շրջանակներում Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյաններն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների 2024-2025թթ. օրացույցում:

Դեկտեմբերի 4-9-ը Կասանե քաղաքում (Բոցվանա) կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի 18-րդ նստաշրջանի շրջանակներում Գյումրիի դարբնության ավանդույթը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

ՀՀ արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության պաշտոնական ամսագրում

անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներով լույս է տեսել Մատենադարանի հայկական և արաբատառ ձեռագրերի վերաբերյալ հոդված:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

ՄԱԿ համակարգի մարմինների համագործակցության համատեքստում ԱԳՆ կողմից իրականացված աշխատանքների արդյունքում 2023թ.-ի ընթացքում Հայաստանն ընտրվել է հետևյալ մարմիններում.

-Ատոմային էներգիայի միջազգային գործակալության կառավարիչների խորհուրդ (IAEA, 2023-2025թթ.)
-ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության միջկառավարական կոմիտե (Committee for the protection of cultural property in the events of armed conflict, 2023-2026թթ.)
-Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողով (CCPCJ, 2024-2026թթ.)
-Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի հանձնաժողով (CND, 2024-2027թթ.)
-ՄԱԿ Ծրագրերի և համակարգման կոմիտե (CPC)՝ 2024-2026թթ.:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ Մշտական խորհրդի օրակարգում ներառված են եղել ՀՀ ինքնիշխան տարածք Ադրբեջանի ներխուժման, Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանության, Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտման, Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի խախտման, հայ ռազմագերիների ապօրինի կալանքի, ԼՂ-ում հայկական մշակության ժառանգության պահպանմանը վերաբերող հարցերը:

Հաշվետու ժամանակաշրջանում հայկական կողմի նախաձեռնությամբ հրավիրվել են ԵԱՀԿ Մշտական խորհրդի 4 հատուկ նիստ (հունվարի 17 և հուլիսի 20՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյան, սեպտեմբերի 12՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Վահե Գևորգյան, սեպտեմբերի 20՝ ԵԱՀԿ-ում ՀՀ ՄՆ Արմեն Պապիկյան), որոնց ընթացքում ներկայացվել են օրակարգային խնդիրները:

ՀՀ ԱԳ նախարարը հեռախոսազրույցներ (հունվարի 10, օգոստոսի 10) և հանդիպումներ է (ապրիլի 13, հուլիսի 8 և սեպտեմբերի 19) ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ, Հյուսիսային Մակեդոնիայի ԱԳ նախարար Բույար Օսմանիի և ԵԱՀԿ Գլխավոր քարտուղար Հելգա Շմիդի հետ (հունվարի 17, հուլիսի 18, սեպտեմբերի 18, դեկտեմբերի 1):

Ապրիլի 13-ին կայացել է ԵԱՀԿ գործող նախագահ, Հյուսիսային Մակեդոնիայի ԱԳ նախարար Բույար Օսմանիի աշխատանքային այցը Հայաստան:

Օգոստոսի 25-ին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը ԵԱՀԿ գործող նախագահի հանձնարարականով այցելել է Սյունիքի Կոռնիձորի սահմանային հատված՝ ԵԱՀԿ գործող նախագահ Բույար Օսմանիին Լաչինի միջանցքի արգելափակման շուրջ իրավիճակի մասին զեկուցելու նպատակով:

Նոյեմբերի 18-19-ը Երևանում կայացել է ԵԱՀԿ ԽՎ աշնանային նստաշրջանը, որին մասնակցել է շուրջ 300 պատվիրակ 47 երկրից:

Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը Հյուսիսային Մակեդոնիայի Սկոպյե քաղաքում կայացել է ԵԱՀԿ 30-րդ նախարարական համաժողովը: Համաժողովի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդես է եկել ելույթով և ունեցել մոտ երկու տասնյակ հանդիպում:

Փետրվարի 10-ին տեղի է ունեցել հեռախոսազրույց Ֆրանսիայի համանախագահ Բրիս Ռոքֆոյի հետ, հանդիպումներ՝ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԱՄՆ համանախագահ Լուիս Բոնոյի հետ (փետրվարի 18, մայիսի 26, հոկտեմբերի 11), Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորմանն աջակցելու հարցերով ՌԴ արտաքին գործերի նախարարի հատուկ ներկայացուցիչ Իգոր Խովաևի հետ (մայիսի 10):

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունը Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման և դրա հետևանքով ստեղծված հումանիտար ճգնաժամի, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտման քաղաքականության արդյունքում 100 հազարից ավելի հայերի բռնի տեղահանություն և դրա հետևանքով ստեղծված հումանիտար իրավիճակին առնչվող հարցերը մշտապես բարձրացրել է Նախարարների կոմիտեի հանդիպումներին:

Հունվարի 19-ին ԵԽ ՆԿ նախագահության անունից հայտարարություն է արել Իսլանդիայի արտաքին գործերի նախարարը:

Փետրվարի 17-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԵԽ ԳՔ տեղակալ Բյորն Բերգեյի մասնակցությամբ պաշտոնական մեկնարկ է տրվել Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2023-2026թթ. Գործողությունների ծրագրին (ԳԾ):

Մայիսի 16-17-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել և ելույթով հանդես է եկել Եվրոպայի խորհրդի պետությունների ղեկավարների 4-րդ գագաթնաժողովին /Ռեյկյավիկի գագաթնաժողով/:

Հունիսի 19-23-ը ԵԽԽՎ ամառային նստաշրջանի ընթացքում հրատապ քննարկման արդյունքում ընդունվել է իռլանդացի զեկուցող Փոլ Գավանի «Լաչինի միջանցքով ազատ և անվտանգ մուտքի ապահովում» զեկույցը, համանուն 2508(2023) Բանաձևը և 2256(2023) Խորհրդատվությունը:

Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման առնչությամբ հուլիսի 28-ին հայտարարություն է արել ԵԽ գլխավոր քարտուղար /ԵԽ ԳՔ/ Մարիա Պեյչինովիչ Բուրիչը:

ԵԽ ԳՔ նախաձեռնությամբ հուլիսի 6-7-ը ՀՀ-ում էին գտնվում ԵԽ մարդու իրավունքների ու իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրեն Խրիստոս Յակումոպուլոսը, հոկտեմբերի 10-13-ը՝ Միգրացիայի և փախստականների հարցերով ԵԽ ԳՔ հատուկ ներկայացուցիչ Լեյլա Քայաջիկը:

Սեպտեմբերի 19-ին հայտարարություն է արել ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի նախագահ Լինդերտ Վերբիկին:

Սեպտեմբերի 20-ին Մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը հանդես է եկել ռազմական ագրեսիան դատապարող խիստ հայտարարությամբ: Հոկտեմբերի 16-19-ը Հանձնակատարն այցելել է ՀՀ, հետո նաև՝ Ադրբեջան և Լեռնային Ղարաբաղ: ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է Դունյա Միյատովիչին մայիսի 16-ին Ռեյկյավիկում ԵԽ գագաթնաժողովի և օգոստոսի 29-ին՝ Սլովենիայում, Բլեդի ռազմավարական համաժողովի շրջանակներում:

ԵԽԽՎ նախագահ Թինի Կոքսը հայտարարություններ է արել հուլիսի 30-ին և սեպտեմբերի 19-ին:

Հոկտեմբերի 10-ին տեղի է ունեցել ԵԽԽՎ Նախարարների կոմիտեի Համատեղ կոմիտեի (Joint Committee) նիստ՝ նվիրված ԼՂ հայերի իրավունքներին ու հումանիտար իրավիճակին:

Հոկտեմբերի 17-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Եվրոպական խորհրդարան այցի շրջանակներում Ստրասբուրգում հանդիպել է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչին:

Հոկտեմբերի 12-ին ԵԽԽՎ լիագումար նիստին հրատապ ընթացակարգով քննարկվել է «Հումանիտար իրավիճակը Լեռնային Ղարաբաղում» թեման, ընդունվել է համանուն բանաձև և նախարարների կոմիտեին ուղղված խորհրդատվություն:

Հոկտեմբերի 26-ին ԵԽ տեղական ու տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսն ընդունել է «Մարդասիրական իրավիճակը Ղարաբաղում և հարակից քաղաքներում ու շրջաններում» հռչակագիրը:

Նոյեմբերի 5-9-ը փաստահավաք առաքելությամբ ՀՀ-ում էին գտնվում ԵԽԽՎ Մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմո Կիլյունենը և Բորիանա Աբերգը:

Դեկտեմբերի 19-ին Հայաստան է այցելել ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությունը:

ՄԻԵԴ-ի որոշումը՝ Ադրբեջանի նկատմամբ միջանկյալ միջոցներ կիրառելու վերաբերյալ, կարևոր իրավական հիմք է հանդիսացել ԵԽ-ում և դրա շրջանակներից դուրս քննարկումների համար:

ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՆԱՏՕ)

ՀՀ և Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) միջև շարունակվել է քաղաքական երկխոսությունը և նախանշվել են հետագա համագործակցություն ուղղությունները:

Հունվարի 23-ին ԵՄ այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում հանդիպել է ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

Հունվարի 18-ին և մայիսի 23-ին Հայաստան է այցելել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինան:

Մայիսի 15-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում մասնակցել է Մշտական ներկայացուցիչների տեղակալների կոմիտե+Հայաստան (DPRC+Armenia) ձևաչափով հանդիպմանը:

Աշխատանք է տարվել ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության նոր փաստաթղթի՝ Անհատապես հարմարեցված գործընկերության ծրագրի (ITPP) համաձայնեցման և հաստատման ուղղությամբ:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում շարունակվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ ակտիվ համագործակցությունը:

Հոկտեմբերի 17-19-ը Հայաստան է այցելել Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիկիվաբոն: Վերջինիս ընդունել են ՀՀ վարչապետ Նիկոլ

Փաշինյանը և ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը: Գլխավոր քարտուղարը հանդիպել է նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստան ժամանած ֆրանկոֆոն փախստական երիտասարդների:

Հայաստանի պատվիրակությունը՝ ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանի ղեկավարությամբ, նոյեմբերի 4-5-ը Յաունդեում (Կամերուն) մասնակցել է Ֆրանկոֆոնիայի 44-րդ նախարարական համաժողովի աշխատանքներին:

ՀՀ ԱԳ նախարարության ակտիվ ներգրավմամբ մշակվել և սեպտեմբերի 29-ին ՖՄԿ-ին ներկայացվել է 2027թ. կայանալիք Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերը Հայաստանում հյուրընկալելու հայտը: Այդ համատեքստում ՀՀ հրավերով մարտին և նոյեմբերին Երևան է այցելել Ֆրանկոֆոնիայի միջազգային խաղերի կոմիտեի նախագահ Զեյնա Մինան:

Դեկտեմբերի 14-ին Փարիզում՝ ՖՄԿ կենտրոնակայանում, տեղի է ունեցել հայտի շնորհանդեսը և նախնական դիտարկումը, որին Հայաստանից մասնակցել է միջգերատեսչական պատվիրակություն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ:

Ապրիլին Ազգային ֆրանկոֆոն քառամյա նախաձեռնության շրջանակներում ՀՀ ու ՖՄԿ միջև ստորագրվել է 2023-2026 թթ. գործընկերության հուշագիրը, որն ուղղված է ՀՀ պետական համակարգում ֆրանսերենի ամրապնդմանն ու առաջմղմանը:

Ֆրանկոֆոնիայի միջազգային օրը՝ մարտի 20-ին, մեկնարկել է Ֆրանկոֆոնիայի ավանդական երկամսյակը, որի շրջանակներում տեղի են ունեցել ֆրանսերեն լեզվին և ֆրանկոֆոն մշակույթին նվիրված շուրջ 700 միջոցառումներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ակտիվացել են աշխատանքները ՏՐԱՍԵԿԱ, ՍԾՏՀԿ, ՄԱԿ ԵՏՀ, ՄԱԿ ԱԽՏՍՀ (UNESCAP), Հռոմում հավատարմագրված գյուղատնտեսական և պարենային կազմակերպություններում:

Առանձնակի ակտիվություն է ցուցաբերվել ՄԱԿ շրջանակներում գործող դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խմբում: Հունիսի 13-ին ՀՀ ԱԳ նախարարությունը Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) հետ համատեղ իրականացրել է «Impact of the international health crisis on legal infrastructure for trade» խորագրով հիբրիդային միջոցառումը, որին մասնակցել է հանձնաժողովի քարտուղար Աննա Ժուբան-Բրետը:

Շարունակվել են Հայաստանի աշխատանքները Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) շրջանակներում: Հունիսի 13-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը մասնակցել է ՍԾՏՀԿ

անդամ պետությունների ԱԳ նախարարների խորհրդի (ԱԳՆԽ) առցանց 46-րդ հանդիպմանը: Դեկտեմբերի 15-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը մասնակցել է ՍԾՏՀԿ ԱԳՆԽ առցանց 47-րդ հանդիպմանը: Հայկական կողմն իր ելույթներում վերահաստատել է Հայաստանի դիրքորոշումն ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և ազգային իրավասության հիման վրա տարածաշրջանում հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հարցում՝ ներկայացնելով ՀՀ կառավարության կողմից առաջ քաշված «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը:

Դեկտեմբերի 14-15-ը ՀՀ ԱԳ նախարարության կողմից կազմակերպվել է Դեպի ծով ելք չունեցող զարգացող պետությունների նախարարական հանդիպումը: Հանդիպմանը մասնակցել են ՄԱԿ գլխավոր քարտուղարի տեղակալ, Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հարցերով ՄԱԿ ԳՔ բարձր ներկայացուցիչ (UNOHRLLS) Ռաբաբ Ֆաթիման, ՄԱԿ եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) գործադիր քարտուղար Տատյանա Մոլչեանը, Առևտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Սյանչենը Ճանը, ավելի քան մեկ տասնյակ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, դեպի ծով ելք չունեցող երկրների արտաքին գործերի, տրանսպորտի նախարարներ և փոխնախարարներ: Հանդիպման ավարտին ընդունվել է «Երևանի հայտարարությունը», որը կարևոր նշանակություն է ունենալու տրանսպորտային փոխկապակցվածության ոլորտի քննարկումներում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երկկողմ օրակարգում և բազմակողմ հարթակներում Հայաստանի Հանրապետության առաջնայնությունների հիմքում շարունակել են մնալ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, ոճրագործությունների կանխարգելման, դրանց դեմ պայքարի հարցերը:

Օգոստոսի 7-ին ՄԱԿ հատուկ ընթացակարգերը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ և ահազանգել ԼՂ բնակչության հումանիտար ծանր իրավիճակի վերաբերյալ: ՄԱԿ փորձագետները կոչ են արել Ադրբեջանի իշխանություններին անհապաղ վերականգնել Լաչինի միջանցքով անձանց, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով ազատ և անվտանգ տեղաշարժը: Նրանք նաև կոչ են արել ԼՂ-ում տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերին պաշտպանել միջանցքը՝ զինադադարի մասին պայմանագրի դրույթների համապատասխան:

Դեկտեմբերի 1-ին Մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցողը հրապարակել է Ադրբեջանին ուղղված իր հաղորդագրությունը, որում մտահոգություն է հայտնել հայկական պատմական, մշակութային և կրոնական նշանակություն ունեցող վայրերի և օբյեկտների շարունակական ոչնչացման և

յուրացման փաստի, ԼՂ պատմության խեղաթյուրման վերաբերյալ՝ ինչը նպատակ ունի վերացնելու հայերի ներկայության հետքերը:

ՄԱԿ Գլխավոր քարտուղարի ցեղասպանության կանխարգելման հարցով հատուկ խորհրդականը՝ սեպտեմբերի 22-ին և հոկտեմբերի 10-ին հրապարակված մամլո հաղորդագրություններում մասնավորապես շեշտվում է բռնի տեղահանվածների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը:

Հոկտեմբերի 11-ին՝ ՄԻԽ 54-րդ նստաշրջանի ընթացքում, 40 երկրներ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով Ադրբեջանին իրականացնել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի միջանկյալ որոշման դրույթները, Արդարադատության միջազգային դատարանի որոշումները, ինչպես նաև երաշխավորել հայկական կրոնական և մշակութային ժառանգության պաշտպանությունը:

Մարդու իրավունքների համագործակցության մարմիններ և հարթակներ

Հայաստանը շարունակել է մասնակցությունը մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված տարբեր համաժողովներին, ինչպես նաև համագործակցությունը ՄԱԿ տարբեր մարմինների և մարդու իրավունքների հատուկ ընթացակարգերի հետ:

Մարտի 21-ին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը մասնակցել և ելույթ է ունեցել Բուենոս Այրեսում անցկացվող Մարդու իրավունքների 3-րդ համաշխարհային ֆորումի հատուկ քննարկումներում, որոնք նվիրված էին մարդու իրավունքների և ժողովրդավարության ապագայի հարցերին:

Հոկտեմբերի 4-5-ը Ժնևում ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 74-րդ նստաշրջանի ընթացքում տեղի է ունեցել համանուն դաշնագրի շրջանակում ներկայացված Հայաստանի Հանրապետության 4-րդ պարբերական զեկույցի քննարկումը: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեի անդամների ուշադրությունը հրավիրվել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ իրականացված էթնիկ զտման հետևանքով ստեղծված հումանիտար ճգնաժամի վրա:

Նոյեմբերի 16-24-ը Հայաստան է այցելել Ճշմարտության, արդարության և չկրկնվելու երաշխիքների հարցերով Հատուկ զեկուցող Ֆաբիան Սալվիոլին: Այցի արդյունքում հրապարակվել է նախնական դիտարկումների փաստաթուղթ, որում շեշտվել է, որ հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտում ենթարկվել է ցեղասպանության, 20-րդ դարում անցել

խորհրդային շրջանի բռնաճնշումների, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում՝ պատերազմական հանցագործությունների միջով:

ՀՀ արտաքին քաղաքականության առաջնայնությունների շարքում է եղել նաև **Ցեղասպանության կանխարգելման օրակարգը**:

2023թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ ԱԳ նախարարը տեսաուղերձով հանդես է եկել «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին» կոնվենցիայի 75-րդ տարեդարձին նվիրված՝ Մարդու իրավունքների խորհրդի միջնստաշրջանային հանդիպմանը:

Հանդիպումը կազմակերպվել է Մարդու իրավունքների խորհրդի՝ Հայաստանի կողմից հեղինակված բանաձևի հիման վրա:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 75-ամյակ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 75-ամյակի կապակցությամբ Հայաստանը ներկայացրել է ապագային ուղղված հանձնառություններ՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտում:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներ

Սեպտեմբերի 19-20-ը ԼՂ դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական հարձակումը հանգեցրել է ԼՂ հայ բնակչության էթնիկ զտման, որի արդյունքում մի քանի օրվա ընթացքում Հայաստան են բռնի տեղահանվել ԼՂ ավելի քան 108.000 հայ բնակիչներ: Հրամայական է դարձել միջազգային գործընկերների ներգրավմամբ վերջիններիս հրատապ կարիքների հասցեագրումից անցնել միջնաժամկետ և երկարաժամկետ կարիքների գնահատման:

Հոկտեմբերի 7-ին ՀՀ ԱԳ նախարարի և Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի նամակների փոխանակման արդյունքում ՄԱԿ-ի և Գործընկերների կողմից հայտարարվել է ԼՂ փախստականների կարիքներին համահունչ Հայաստանի կառավարությանը աջակցելու համատեղ կոչը (Humanitarian Urgent Appeal), և մեկնարկել է ՄԱԿ Միջգործակալական արձագանքման ծրագիրը:

Հոկտեմբերի 17-ին ԱԳ փոխնախարարի մասնակցությամբ տեղի է ունեցել ԼՂ փախստականների կարիքների արձագանքման ծրագրի մեկնարկը:

Հոկտեմբերի 9-ին Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի գործադիր հանձնաժողովի նիստի ընթացքում ԱԳ փոխնախարար

Վահե Գևորգյանը ներկայացրել է էթնիկ զտման հետևանքով Հայաստան մուտք գործած փախստականների իրավիճակը:

Փախստականներին օժանդակություն տրամադրելու նպատակով կարճ ժամանակահատվածում Հայաստան այցելել են Միգրացիայի միջազգային կազմակերպության տարածաշրջանային տնօրեն Մանֆրեդ Պրոֆազին, ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Եվրոպայի հարցերով տարածաշրջանային տնօրեն Ֆիլիպ Լըկլերկը, ՄԱԿ Մանկական հիմնադրամի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Ռեգինա դե Դոմինիկսը:

Հոկտեմբերի 4-ին Հայաստան է ժամանել ՄԱԿ Հումանիտար հարցերի համակարգման գրասենյակի Ժնևի գրասենյակի (OCHA) ղեկավար Մոհան Ռամեշ Ռաջասինգհամի գլխավորած պատվիրակությունը:

Դեկտեմբերի 13-15-ը Ժնևում կայացած Փախստականների գլոբալ ֆորումին մասնակցել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի գլխավորած պատվիրակությունը, որում ներգրավված են եղել փախստականների ներկայացուցիչներ: Դեկտեմբերի 14-ին Վահան Կոստանյանը հանդիպում է ունեցել ՄԱԿ փախստականների հարցերով բարձր հանձնակատարի՝ գործողությունների հարցերով փոխտեղակալ Ռաուֆ Մարզուի հետ: Հաշվի առնելով ՀՀ կողմից փախստականների մեծ հոսքի ընդունման փաստը՝ որոշում է կայացվել Հայաստանն ընդգրկել միջին եկամուտ ունեցող երկրների համար նախատեսվող Գլոբալ արտոնյալ վարկավորման ծրագրի շահառուների ցանկում: Հայաստանի Հանրապետությունը ֆորումի շրջանակներում ստանձնել է մի շարք կամավոր հանձնառություններ, որոնք պետք է նպաստեն փախստականների ներառմանը ՀՀ առողջապահության և կրթության համակարգում, նրանց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

Հաշվետու տարում ՀՀ ԱԳ նախարարը երկու հանդիպում է ունեցել ՄԱԿ փախստականների հարցերով բարձր հանձնակատար (UNHCR) Ֆիլիպո Գրանդիի հետ (փետրվարի 27-ին և սեպտեմբերի 23-ին):

Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդառված քաղաքացիական անձանց վերադարձի ուղղությամբ ձեռնարկվող քայլեր

Շարունակվել են աշխատանքները Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդառված քաղաքացիական անձանց ազատ արձակման խնդրին միջազգային ուշադրությունը հրավիրելու, Ադրբեջանի կողմից բոլոր ռազմագերիների և այլ պահվող անձանց ազատ արձակելու ուղղությամբ:

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը երկու հանդիպում է ունեցել (փետրվարի 27-ին և սեպտեմբերի 23-ին) Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախագահ Միրյանա Սպոլյարիչ Էգգերի հետ:

Նոյեմբերի 30-ին ՀՀ ԱԳ նախարարը ելույթ է ունեցել ԵԱՀԿ նախարարական 30-րդ համաժողովին, որի շրջանակներում, ի թիվս այլ հարցերի, կարևորել է բոլոր հայ գերիների և պահվող անձանց, այդ թվում՝ սեպտեմբերի 19-ից հետո կալանավորվածների ազատ արձակումը, անհայտ կորածների ճակատագրերի պարզաբանմանն ուղղությամբ համագործակցությունը, Լեռնային Ղարաբաղում և դրա շրջակայքում հայկական մշակութային ժառանգության պաշտպանությունը, որը կարող է ճանապարհ հարթել դեպի երկարատև, արդար և արժանապատիվ խաղաղություն:

Անհայտ կորած հայ զինծառայողների և քաղաքացիական անձանց առնչվող հարցեր

Հունիս-հուլիս ամիսներին տեղի է ունեցել Անհայտ կորած անձանց հարցերով միջազգային հանձնաժողովի (ICMP) գլխավոր տնօրեն Քեթրին Բոմբերգերի այցը Հայաստան, աջակցություն է ցուցաբերել զոհված հայ զինծառայողների մասունքների նույնականացման գործընթացում: Կառույցի հետ համագործակցությունը շարունակվում է:

ԳԼՈԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայաստանը շարունակել է աջակցել գլոբալ անվտանգության ապահովման ջանքերին, մասնավորապես միջազգային կազմակերպությունների շրջանակներում միջուկային զենքերի չտարածման, զինաթափման և փորձարկումների արգելման հարցերով համագործակցության շրջանակներում:

Խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման ոլորտում ՀՀ կարողությունների զարգացման նպատակով շարունակվել է համագործակցությունը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ:

Սեպտեմբերի 25-29-ը Վիեննայում կայացած ԱԷՄԳ գլխավոր համաժողովի 67-րդ նստաշրջանի ընթացքում Հայաստանի Հանրապետությունն ընտրվել է 2023-2025թթ. ժամանակահատվածի համար ԱԷՄԳ Կառավարիչների խորհրդի անդամ:

Նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Հաագայում կայացած ՔԶԱԿ անդամ երկրների համաժողովի 28-րդ նստաշրջանի աշխատանքներին:

Դեկտեմբերի 4-8-ը ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Ժնևում կայացած Կենսաբանական զենքի կոնվենցիայի աշխատանքային խմբի երրորդ նստաշրջանին և դեկտեմբերի 11-13-ը՝ Կենսաբանական զենքի կոնվենցիայի մասնակից պետությունների հանդիպմանը:

Փետրվարի 20-27-ը տեղի է ունեցել ՄԱԿ վարձկանների հարցերով աշխատանքային խմբի այցը Հայաստան՝ նվիրված ՀՀ կողմից Վարձկանների հարցերով ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացման (International Convention against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries) համատեքստում հայկական կողմում իրազեկվածության բարձրացմանը, ՀՀ համապատասխան գերատեսչություններին Կոնվենցիայի դրույթների իրականացման աջակցության, փորձի փոխանակման, լավագույն օրինակների տրամադրմանը: Այցի շրջանակներում աշխատանքային խումբն այցելել է Սյունիք և հանդիպել Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց:

Սեպտեմբերի 19-ին կայացած Մարդու իրավունքների խորհրդի 54-րդ նստաշրջանին ներկայացվել է աշխատանքային խմբի՝ Հայաստան կատարած այցի արդյունքներն ամփոփող զեկույցը, որում մասնավորապես նշված է, որ Հայաստանն իրականացնում է հնարավորը Կոնվենցիայի դրույթները ՀՀ օրենսդրության մեջ կիրարկելու ուղղությամբ:

ՀՀ-ն միացել է ԱՄՆ կողմից նախաձեռնած «Արհեստական բանականության և ինքնավարության պատասխանատու ռազմական օգտագործման» վերաբերյալ քաղաքական հռչակագրին: Փաստաթուղթն ընդունվել է նոյեմբերի 13-ին Նյու Յորքում կայացած բարձր մակարդակի հանդիպման (high-level endorsement meeting) շրջանակներում:

Նոյեմբերի 17-ին ՀՀ-ն ստորագրել է «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայի «Ընդլայնված համագործակցության և էլեկտրոնային ապացույցների բացահայտման վերաբերյալ» երկրորդ լրացուցիչ արձանագրությունը, որն ընձեռում է հավելյալ մեխանիզմներ կիբեռհանցագործությունների, ինչպես նաև քրեական հանցագործությունների էլեկտրոնային ձևով ապացույցների ձեռքբերման ուղղությամբ:

ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը շարունակել է իր մասնակցությունը ՆԱՏՕ-ի հովանու ներքո Կոսովոյում խաղաղապահ առաքելությանը (KFOR): Հուլիսին ՀՀ խաղաղապահ անձնակազմն ավելացվել է 17 ծառայողով՝ ընդհանուր թվաքանակը հասցնելով 57-ի:

Շարունակվել է նաև մասնակցությունը Լիբանանում ՄԱԿ ՅՈՒՆԻՖԻԼ խաղաղապահ առաքելությանտ, որտեղ Հայաստանի 33 հոգանոց

խաղաղապահ զորախումբը գործում է իտալական հրամանատարության ներքո:

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

Հաշվետու տարվա ընթացքում ընդլայնվել է երկկողմ և բազմակողմ ձևաչափով Հայաստանի Հանրապետության իրավապայմանագրային դաշտը: Նախարարության կողմից պատրաստվել և ստորագրման է ներկայացվել 90 պայմանագիր (երկկողմ և բազմակողմ ձևաչափով), իրականացվել է 63 միջազգային պայմանագրի վավերացման և հաստատման գործընթաց, շրջանառվել և ուժի մեջ են մտել 25 իրավական ակտ:

Մշակվել և շրջանառվել են երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի շուրջ 479, իրավական ակտերի շուրջ 20 նախագծեր, ինչպես նաև փորձաքննության է ենթարկվել միջազգային պայմանագրեր չհանդիսացող փաստաթղթեր:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱԳՆ հյուպատոսական վարչությունը և ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները շարունակել են իրականացնել միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված շրջանակներում օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցության ցուցաբերումը:

Միաժամանակ, ԱԳՆ հյուպատոսական վարչության կողմից 2023թ. ընթացքում նախաձեռնվել են բազմաթիվ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ, որոնք ուղղված են բարեփոխելու պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք դարձնելով քաղաքացիակենտրոն, արդիական, առաջադեմ և տեխնոլոգիական հիմքով: Մասնավորապես,

• ՀՀ կառավարության 04.10.2007թ. թիվ 1154-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության 17.08.2023թ. թիվ 1376-Ն որոշման ընդունում, որով նախևառաջ հստակեցվել է տեղեկանքի բովանդակությունը՝ «ՀՀ քաղաքացի չհանդիսանալու» ձևակերպման մասով՝ ապահովելով միասնական վարչարարություն և դյուրացվել անձի՝ ՀՀ քաղաքացիության մասին տեղեկանքի ստացման գործընթացը՝ ստեղծելով առցանց դիմելու հնարավորություն,

• Օրենսդրական փոփոխություններ են կատարվել «Նոտարիատի մասին» և «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքներում, ըստ որոնց,

կկրճատվեն հավելյալ ծախսերը, համապարփակ կկարգավորվի հետախուզվող անձի նկատմամբ նոտարական գործողություն կատարելու մերժման կարգը և կհստակեցվի ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների անունից նոտարական գործողություններ կատարող անձանց շրջանակը, կբարձրացվի փաստաթղթերի իսկության ստուգման արդյունավետությունը,

• Ընդունվել է «Դիվանագիտական անձնագիրը տրամադրելու, հաշվառելու, տրամադրումը մերժելու, հետ վերցնելու և անվավեր ճանաչելու կարգը սահմանելու մասին» ՀՀ արտաքին գործերի նախարարի հրամանը, որով հստակեցվել է դիվանագիտական անձնագրերի տրամադրման, հաշվառման, տրամադրումը մերժելու, հետ վերցնելու և անվավեր ճանաչելու իրավահարաբերությունները:

Վիզային ռեժիմի դյուրացման շրջանակներում՝

• 2023թ. օգոստոսի 25-ից ՀՀ քաղաքացիները կարող են Ինդոնեզիայի մուտքի վիզա ստանալ ժամանման պահին՝ սահմանին,

• 2023թ. սեպտեմբերի 8-ից ՀՀ քաղաքացիները կարող են փոխադարձության սկզբունքի հիման վրա Պանամա այցելել առանց մուտքի վիզայի,

• 2023թ. սեպտեմբերի 25-ից ՀՀ դիվանագիտական անձնագիր ունեցող քաղաքացիները կարող են փոխադարձության սկզբունքի հիման վրա Իսրայելի Պետություն այցելել առանց մուտքի վիզայի:

Միաժամանակ, այլ երկրներում գտնվող ՀՀ քաղաքացիները շարունակում են տեսակապի միջոցով դիմել ՀՀ ԱԳՆ և փոխանակել իրենց անձնագիրը կամ ստանալ ՀՀ վերադարձի վկայական:

Ներդրվել է օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանություններում ժամադրություն ամրագրելու միասնական համակարգ:

ՀՀ ԱԳՆ՝ քաղաքացիների ընդունելության սրահում, պիլոտային ռեժիմով սկսել է կիրառվել պետական վճարումների «E-Payments» էլեկտրոնային համակարգի հիման վրա գործող POS տերմինալը, որի միջոցով քաղաքացիները կարողանում են կատարել պետական տուրքի անկանխիկ վճարումներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում կայացել է Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի 10 (2 պաշտոնական, 8 աշխատանքային) այց, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 18 (1 պաշտոնական, 17 աշխատանքային), ԱԳ

նախարար Արարատ Միրզոյանի 38 (4 պաշտոնական, 34 աշխատանքային) այց:

Հայաստան է այցելել օտարերկրյա պետության 2 նախագահ (պաշտոնական այցեր), կառավարության 7 ղեկավար (աշխատանքային այցեր), արտաքին գերատեսչության 14 ղեկավար (5 պաշտոնական, 9 աշխատանքային այցեր): Տեղի է ունեցել միջազգային կազմակերպության ղեկավարի 7 աշխատանքային այց:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած պետությունների թիվը 182 է:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանում հավատարմագրված է 41 ռեզիդենտ, 2 դեսպանության գրասենյակ, 1 մշտական ներկայացուցչություն, 72 ոչ ռեզիդենտ դեսպանություն, 36 միջազգային կազմակերպության ներկայացուցչություն, 2 գլխավոր հյուպատոս և 45 պատվավոր հյուպատոս:

Հաշվետու տարում Հայաստանում հավատարմագրվել է 12 ռեզիդենտ դեսպան, 17 ոչ ռեզիդենտ դեսպան, 1 մշտական ներկայացուցիչ, 2 պատվավոր հյուպատոս: Համաձայնություն է տրվել ՀՀ-ում օտարերկրյա 18 ռազմական կցորդի, 6 ռազմական կցորդի օգնականի նշանակմանը: Հաշվետու տարում Երևանում բացվել է երեք դեսպանություն (Բելգիա, Կանադա, Կատար բացմանը):

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին արտերկրում ՀՀ-ն ունի հավատարմագրված 41 ռեզիդենտ դեսպանություն, 2 դեսպան՝ նստավայրը՝ Երևան, 1 դեսպանության գրասենյակ, որոնք համատեղության կարգով հավատարմագրված են ևս 53 երկրում:

ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 16 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են ՀՀ 10 գլխավոր հյուպատոսություն և 62 պատվավոր հյուպատոսություն:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է նաև արտասահմանյան երկրներում ՀՀ 17 դեսպանի, միջազգային կազմակերպությունում 3 ներկայացուցչի, 4 գլխավոր հյուպատոսի, 8 պատվավոր հյուպատոսի և 5 ռազմական կցորդի և 1 ռազմական կցորդի օգնականի նշանակումը:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հաշվետու տարում ավարտվել է «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» 2022-23թթ. դասընթացը, որի 10 շրջանավարտները համալրել են ՀՀ դիվանագիտական ծառայության շարքերը:

Իրականացվել է «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» 2023-24թթ. դասընթացի ընդունելություն:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցում անցկացվել են վերապատրաստման վեց ծրագրեր՝ արտերկրում գործուղված հյուպատոսների համար «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը» թեմայով (առցանց), «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների» (եռամսյա) երկու վերապատրաստում, որոնցից մեկը՝ արտաքին մրցույթով ընդունված դիվանագետների համար, արտերկրի երիտասարդ դիվանագետների համար դիվանագիտական վերապատրաստում (երկշաբաթյա դասընթաց Իրաքյան Քուրդիստանի երիտասարդ դիվանագետների համար) և արտաքին քաղաքականության ոլորտը լուսաբանող լրագրողների վերապատրաստում: Անցկացվել են օտար լեզուների (հինգ լեզուներ) դասեր ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի աշխատակիցների և Դիվանագիտական դպրոցի ունկնդիրների համար:

Իրականացվել է «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» 2022-23թթ. ծրագրի ունկնդիրների ուսումնական այց միջազգային կառույցների եվրոպական կենտրոններ (Ստրասբուրգ, Բրյուսել և Ժնև):

Հաշվետու տարում ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը փոխըմբռնման հուշագրեր է ստորագրել Վրաստանի ԱԳՆ Լևան Միքելաձեի անվան դիվանագիտական վերապատրաստման և հետազոտական ինստիտուտի և Ռումինական դիվանագիտական ինստիտուտի հետ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

2023թ. շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, ՀՀ միջազգային դրական հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

ՀՀ նախագահը, վարչապետն ու արտաքին գործերի նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, հանդես են եկել մամուլի ասուլիսներով՝ ներկայացնելով տարածաշրջանային և միջազգային տարբեր գործընթացների խնդիրների ու դրանց հանգուցալուծման վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը:

Հաշվետու տարում իրականացվել են ինտենսիվ աշխատանքներ միջազգային հանրությանը իրազեկելու 2022թ. դեկտեմբերից Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

Արտակարգ ռեժիմով իրականացվել է սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական հարձակման հետևանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի, ինչպես նաև Ադրբեջանի էթնիկ զտման քաղաքականության և Լեռնային Ղարաբաղից հայերի բռնի տեղահանման լայն և օբյեկտիվ լուսաբանմանն ուղղված աշխատանքները:

ԱԳՆ կողմից տարվա ընթացքում կարճաժամկետ ընթացիկ հավատարամագրում է տրամադրվել օտարերկրյա լրատվամիջոցների 600 ներկայացուցչի որոնց տրամադրվել է նաև աջակցություն Հայաստանում իրենց գործունեությունը ծավալելու համար:

ՀՀ վերաբերյալ հաղորդաշարեր և հոդվածներ պատրաստելու նպատակով Հայաստան են այցելել մի շարք միջազգային լրատվամիջների ներկայացուցիչներ՝ մասնավորապես The Washington Post, Bloomberg, The New York Times, Reuters, Financial Times, BBC, The Guardian, Al Jazeera, CNN, The Economist, Le Point, Le Figaro, La Croix, Deutsche Welle, El País, Canadian Broadcasting Corporation, la Repubblica, Ouest-France, CTC, Sky News, The Wall Street Journal, Lithuanian National Radio and Television, Israeli Public Broadcasting Corporation, Czech TV և այլն:

Իրականացվել է 2024թ. տարեկան հավատարմագրումը՝ շուրջ 170 լրագրող:

Հունիսի 28-ից հուլիսի 6-ը տեղի է ունեցել արտաքին քաղաքականությունը լուսանաբանող հայ լրագրողների համար իրականացվող հերթական դասընթացը:

Օգոստոսի 24-25-ը ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի արտահերթ նիստի շրջանակներում կազմակերպվել և համակարգվել են լուսաբանման աշխատանքները:

Դեկտեմբերի 14-15-ը իրականացվել է Երևանում կայանալիք Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների նախարարական հանդիպման լուսաբանմանը մասնակցող լրատվամիջոցների ներկայացուցիչների աշխատանքների համակարգումը:

ԱԳՆ կողմից տպագրվել են Հայաստանը ներկայացնող տեղեկատվական բազմալեզու գրքեր և գրքույկներ:

Հաշվետու տարում ԱԳՆ կայքում հրապարակվել են շուրջ 1600 մամուլի հաղորդագրություն, հայտարարություն և հարցազրույց, որոնք թարգմանվել և

տարածվել են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային լրատվամիջոցների շրջանում:

Տեղեկատվությունն առավել օպերատիվ և հասանելի տարբերակով միջազգային հանրությանը ներկայացնելու նպատակով օգտագործվել են հետևյալ պաշտոնական օգտահաշիվները.
X (@MFAofArmenia, @ArmDiplo, @AraratMirzoyan, @ArmSpoxMFA),
Facebook (@MFA.Armenia, @ArmDiplo, @Armenia, @ArmSpoxMFA),
Telegram (ՀՀ ԱԳՆ/MFA of Armenia),
Youtube (Ministry of Foreign Affairs of Armenia),
Instagram (@mfa_of_armenia),
Ցեղասպանությունների կանխարգելման օրակարգի ֆեյսբուքյան և թվիթերյան հաշիվները (Yerevan Global Forum, @AgendaToPrevent):

ԱԳՆ կողմից վարվող «Armenia» սոցիալական հարթակներում 2023թ. ընթացքում հրապարկվել են Հայաստանի ու հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը, տեխնոլոգիական ու գիտական ձեռքբերումները, Հայաստանը որպես հետաքրքիր ու դեռևս ամբողջովին չբացահայտված զբոսաշրջային ուղղություն լինելու հանգամանքը, Հայաստանում կատարված խոշոր ներդրումները և տնտեսական հնարավորությունները ներկայացնող ավելի քան 1000 գրառումներ:
Պատասխանվել է լրատվամիջոցներից, քաղաքացիներից, ՀԿ-ներից և պատգամավորներից ստացված շուրջ 500 հարցումների:

ԱԳՆ ուսումնաճանաչողական այցերի շրջանակներում նախարարություն են այցելել շուրջ 1500 այցելու: